

**ՀԱՅ ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԸ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Կարեն Խանլարյան**

Թուրքիայի հայությունը կենցաղահասարակական ներքին հարաբերությունների տեսանկյունից եւ ուժացման ենթարկվելու իմաստով մեծապես այլատարր է եւ ներկայանում է դիմագծային տարբեր տիպերով:

Թուրքիայի Հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստյանը 1980թ., Երուսաղեմում, բանախոսության մեջ հետեւյալն է ասում գավառահայության մասին. «Ձեզ կներկայացնեմ գավառահայության չորս խավերը, ինչպես որ տեսել եմ նրանց.

ա - Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամավոր կերպով իսլամացել են, խզվել են հայությունից եւ ապրում են թուրքերի մեջ: Սրանք են, որ մինչեւ միլիոնի հասնում են իրենց թվով:

բ - Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրդական աշիրեթական ձեւերով ապրում են մեկուսի եւ չեն խառնվում:

գ - Կամա թե ակամա իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են եւ Պոլիս հաստատվելուն պես՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրությունը «էրմենի»-ով են փոխարինում:

դ - Բուն գավառահայերը, որ պատիվ իրենց՝ հակառակ բոլոր զգալի եւ անզգալի դժվարություններին՝ հայ են մնացել, եւ այսօր Ստամբուլի հայության մեծագույն մասը նրանցից է բաղկանում»:

Թեեւ Շնորհք պատրիարքի այս տեղեկատվության համաձայն՝ ներկայիս կացությունը փոխված կարելի է համարել, այնուամենայնիվ, դա բավարար հիմք է հանդիսանում «Անատոլիայի» հայությունը տիպաբանական իմաստով բաժանել երեք էթնոկրոնական տեսակների:

«Պաշտոնական» հայություն

Այս տեսակը Հայ Առաքելական, Կաթողիկե կամ Ավետարանական եկեղեցիներին կապվող համայնքների տեսքով գոյատևել է զանազան նահանգներում եւ ավաններում: «Պաշտոնական» հայության կապը Կ.Պոլսի կազմակերպված համայնքի հետ քիչ թե շատ պահպանվել է մանավանդ պատմական Կիլիկիայում:

Հայության մյուս տեսակների համեմատությամբ՝ «պաշտոնական»

հայության ներկա վիճակի մասին առավել շատ տեղեկություններ կան: Որոշ բացառությամբ նրա վիճակը այսօր եւս շարունակում է մնալ անմխիթար: «Թայմզ» օրաթերթը 1994թ. տվեց այն բանի ազդանշանը, որ Թուրքիայի դեմ մի նոր արշավ պիտի բացվի՝ քրիստոնյաների վրա ծանր ճնշումների առկայության հետ կապված: «Թայմզի» լուրը, մասնավորաբար, գրի է առնվել Թուրքիայի արեւելյան նահանգներում ապրող քրիստոնյաների առնչությամբ:

1995թ. հրատարակված «Չայերն աշխարհում» համառոտ հանրագիտարանը «պաշտոնական» հայության թվաքանակը գնահատում է մոտ 10 հազար:

«Իսլամացած» հայություն

Այս տեսակը հիմնականում բաղկացած է պոնտահայ եւ համշենահայ, մանր ու խոշոր տոհմական խմբերից, որոնք իսլամացել են 17-18-րդ դդ. եւ բնակվում են սելժուկյան ավերիզում, պատմական Ջանիկից (Սամսունից) մինչեւ հայ-վրացական սահմանները երկարող տարածքներում: «Իսլամացած» տիպն իր համեմատական լայն շրջագծում պարունակում է այստեղ նաեւ «կես-կես» եւ «հայ-լազ» կոչված խմբերին:

Չարվարդի եւ Կոլումբիայի համալսարանների լեզվաբանական շրջանակներում համբավ ունեցող Բերտ Վաուքսը համշենահայությունը հիմնականում բաժանում է երեք խմբի.

ա. *արեւմտյան համշենահայություն*. Օրդուում, Տրապիզոնում եւ Ռիզեում ցրված, թուրքախոս եւ իսլամին հարած,

բ. *արեւելյան համշենահայություն*. առավելաբար Արդվինում բնակվող, համշենահայ բարբառով խոսող եւ իսլամին հարած,

գ. *հյուսիսային համշենահայություն*. Վրաստանում եւ Ռուսաստանում բնակվող, համշենահայ բարբառով խոսող եւ քրիստոնյա:

Իսլամացած եւ Թուրքիայում բնակվող առաջին երկու խմբերի թվաքանակը գերակշռում է Թուրքիայի սահմաններից դուրս բնակվող վերջին խմբին:

Wikipedia համացանցային հանրագիտարանը Թուրքիայի համշենցիների կամ հենշինլիների համար նման մի տեսակավորում է նկատի առնում՝ արեւմտյան խումբը կոչելով «Բաշ-հենշինցիներ», իսկ արեւելյան խումբը՝ «Չոփա-հենշինցիներ»:

Չարավային Կալիֆորնիայի համալսարանի քաղաքական գիտությունների թեկնածու Չոլան Սինոնյանը Ռիզեում բնակվող արեւմտյան համշենահայության (կամ բաշ-համշենցիության) թվաքանակը գնահատում է 15-23 հազար: Նույն աղբյուրի հիմամբ՝ Սինոնյանը Չոփայի

(պատմական խոպա) արելեյան համշենահայերի թիվը ներկայացնում է 25 հազար:

Նշանակում է, որ ի տես խոպայի բնակչության, այժմ համշենահայությունն այդտեղ կազմում է բնակչության բացարձակ մեծամասնությունը: Այս նշանակալի իրողությունը հաստատվում է նաև Armeniopedia էլեկտրոնային հանրագիտարանի հեղինակների կողմից:

Թուրքիայի համշենահայության թվաքանակի մասին վկայությունները բավական տարբեր են ու այլազան:

Դոկտ. Թեսա Յոֆմանի գնահատմամբ՝ «այնտեղ 20 հազար մուսուլման համշենցիներ կան, որոնց հայրենիքը գտնվում է Տրապիզոնի եւ Էրզրումի արանքում»:

Դժվար է ճշտել, թե որոնք են համշենահայության թվաքանակի թերազնահատման պատճառները: Վիճակագրական ստույգ տվյալների բացակայության պայմաններում՝ մենք գտնում ենք, որ Թուրքիայի պետական շրջանակներում առկա է պոնտահայերին պոնտացի հույներ, բաշ-համշենցիներին՝ լազեր ու արելեյան համշենահայերի մի բաժնին՝ վրացիներ ներկայացնելու միտումը, որի խորքում, իհարկե, ընկած է հակահայ տրամադրվածությունը:

Իսլամական հասարակության սեկուլարացման ինստիտուտի համանուն կայքէջում մի «իսլամացած» հայ իր 16 սեպտեմբեր, 2002 թվակիր էլեկտրոնային նամակում գրում է. «Հայախոս մուսուլմաններով բնակեցված գյուղեր կան: Որոշ աղբյուրներ նրանց թվաքանակը գնահատում են շուրջ 2 միլիոն»:

Ըստ բուն համշենահայ «Գյոթե» համալսարանի գիտաշխատող, Թուրքիայի նախկին վարչապետ Մեսութ Յըլմազի ազգականուհի Ալիե-Ալիս Ալթըրի (Կոստանյան)՝ «Այսօր ավելի քան մեկ միլիոն իր ազգակիցները գտնվում են ազգային ինքնագիտակցության ու զարթոնքի գործընթացում»:

Ալիե Ալթըրի զավակ, գերմանաբնակ Դենիզ Ալթըրի հարցազրույցում նկարագրվում է համշենահայության վիճակը եւ հստակորեն ակնարկվում Թուրքիայի շուրջ 1,5 մլն հաշվվող համշենահայերի մասին:

Թեեւ կրոնական այլասերումը անցանկալի իրականություն է համշենահայերի համար, սակայն որոշ տվյալներով ապացուցվում է, որ իսլամի նկատմամբ նրանց հավատքը հեռու է սուննիականությանը հատուկ մոլեռանդությունից: «Համշենները շատ կրոնական չեն,–պարզաբանում է Հոլման Սիմոնյանը իր դասախոսություններից մեկում,–նրանք շատ քիչ մզկիթներ ունեն, եւ շատ քիչ մարդիկ են ուշադրություն դարձնում դրանց: Համշենցիները նաև օգտագործում են ալկոհոլիկ խմիչքներ»:

Թուրքիայի համշենահայերը վերջին տարիներին ազգային գիտակ-

ցության զարթոնքի մեծ աշխուժություն են ցուցաբերում: Այս իմաստով հատկանշական են նրանց ինքնարժարժման ելույթներն ու հողվածները՝ մի շարք կայքէջերում եւ էլեկտրոնային ֆորումներում:

«Թաքուն» հայություն

Այս տեսակը բռնի կերպով եւ իր ֆիզիկական գոյությունը պահելու հարկադրանքի տակ իսլամացել է հայկական պարբերական կոտորածների եւ, մասնավորաբար, 1915թ. Ցեղասպանության արդյունքում եւ ապրում է բազմաթիվ առանձին, քրդաբնակ ու թուրքաբնակ գյուղերում, գյուղակներում: Այս տեսակը վերոնշյալ «իսլամացած» տեսակից տարբերվում է իր իսլամացման ժամանակով եւ գործընթացով:

Ներկայիս «Անատոլիայում» բնակված հայությունը, իր էթնիկական վերակերպված տիպերով, շարունակում է մնալ խորհրդավոր եւ գրեթե անճանաչելի: Մյուսների համեմատությամբ «թաքուն» հայերի պարագան, թերեւս, ամենաբարդը պիտի համարել:

Փաստերից եւ ապացույցներից երեւում է, որ այժմ «թաքուն» հայություն է ապրում կենտրոնական եւ արեւելյան Թուրքիայի բազմաթիվ շրջաններում, հատկապես Արեւմտյան եւ Հարավարեւմտյան Հայաստանում:

Քենան էվրենի զինվորական իշխանությունների ժամանակվանից սկսած եւ հատկապես 90-ական թթ. ընթացքում թուրքական բանակն ավերել կամ այրել է բազմաթիվ գյուղեր եւ գյուղակներ Թուրքիայի արեւելյան գավառներում եւ տեղահանել շուրջ երեք միլիոնի հասնող բնակչություն:

Այս զանգվածային վանդալիզմից չէր կարող անմասն մնալ հայությունը: Մեզ դեռ հայտնի չէ հայկական գյուղերի կրած մարդկային եւ նյութական վնասների ճշգրիտ չափը: Մարդկային իրավունքների պաշտպան մի կայքէջում ասվում է. «Թվով 729 գյուղեր (թե՛ քրդական եւ թե՛ քրիստոնեական) դատարկվել են անվտանգության ուժերի միջոցով»:

Մեր տրամադրության տակ «թաքուն» հայության ընդհանուր թվաքանակի բնորոշման համար քիչ տվյալներ կան:

Թեսա Հոֆմանը «crypto-armenians» կամ «թաքուն» հայերի թվաքանակը գնահատում է 30-40 հազար: Մեր համոզմամբ՝ այս թվաքանակը խիստ թերագնահատված է:

Մյուս կողմից՝ գերագնահատված մի թվաքանակի մասին ակնարկներ կան Քրդստանի աքսորյալ խորհրդարանի փաստաթղթերում: Ընդ որում՝ այսպես կոչված, «Մեծ Քրդստանի» սահմաններում ապրող ասորի եւ հայ բնակչության թվաքանակի գումարը գնահատվում է ամբողջական բնակչության շուրջ 10 տոկոսը:

Եթե Թուրքիայի քրդերի միջին թվաքանակը 15 միլիոն համարենք, ապա ասորի եւ հայ բնակչության թվաքանակը, ըստ վերոնշյալ հիմնավորման, պիտի գնահատել շուրջ 1,5 միլիոն:

Քրդական «Ozgur politik» էլեկտրոնային թերթի 1997թ. դեկտեմբերի համարը եւս ակնարկում է նման մի թվաքանակ՝ ասելով, որ «քրդական տարածքներում» սուրիանական եւ հայկական ծագումով 2 միլիոն «քրդեր» կան:

Ասորի եւ հայ բնակչության համար 1,5 միլիոն թվաքանակը թեւ առայժմ փաստարկելի եւ ստուգելի չէ, սակայն լուրջ նկատառման է արժանի: Այնուամենայնիվ, հայ մնացորդացի բնական աճը նկատի առնելով՝ «թաքուն» հայության թվաքանակը առնվազն մի քանի հարյուր հազար կարելի է հաշվել:

Թուրք առաջադեմ մտավորական Քեմալ Յալչինը մի հարցազրույցի ընթացքում ահա այսպես է բնութագրում մերօրյա «թաքուն» հայերին. «Այդպիսի ընտանիքներն ապրում են որպես քուրդ կամ թուրք մուսուլմաններ, եւ նրանց երեխաներն իրենց մայրենի լեզուն չեն սերտում: Իմ տեսած թաքուն հայերից շատերը 15-17 տարեկաններ էին, որոնց ծնողները նրանց զգուշացրել էին չխոսել այդ մասին»:

Իսկ «թաքուն» հայության քաղաքական տիպարի եւ ուղղվածության մասին լիարժեք գաղափար կազմելու համար շահեկան կարող է լինել նաեւ այն բնույթի փաստերին ակնարկելը, որոնք վկայում են քրդական կազմակերպությունների շարքերում ծագումով հայ անդամների մասին:

«Գորշ գայլեր» աշխատության հեղինակներ Ս.Բրամը եւ Ս.Ուլգերն ասում են, որ Թուրքիայում PKK-ն հաճախ է ներկայացվում որպես «հայ ստրուկներից» բաղկացած կառույց: MeHePe-ի երբեմնի առաջնորդ «Ալփարսլան Թյուրքեշը նույնիսկ բերանից բաց է թողել, որ Աբդուլահ Օջալանը քուրդ չէ, այլ հայ, եւ իր իսկական անունն էլ Հակոբ Արթինյան է»:

Թուրքական մի շարք աղբյուրներ, առետրական շրջանակներում համբավ ունեցող Բեհչեթ Ջանթուրթին ներկայացնելով որպես PKK նյութական գործերի եւ հայ ահաբեկչական խմբերի հետ կապերի պատասխանատու, շեշտում են, որ նա «ծնվել է 1950թ. Դիարբեքիրում, քուրդ հորից եւ հայ մորից»:

Մյուս փաստը վերաբերում է PKK նախագահական խորհրդի անդամ Նուրիե Գեսպիրի եւ դրա կենտրոնական կոմիտեի անդամներ Պեքիր Պաքրճյանի եւ Մուսա Հաճըեւի հայկական ծագմանը, որն առաջինը բացահայտել է «Թուրքիե» օրաթերթը 2002թ. նոյեմբերին:

Ազդեցիկ «Միլլիեթ» թերթում Թուրքիայի ռազմական արտակարգ դրության կառավարիչ Իվնիլ Էրքանը հայտարարել է. «Մեր համակարգիչ-

ներում արձանագրել ենք հայկական ծագում ունեցող PKK 800 անդամներ»:

Բիթլիսի տանկային ստորաբաժանման հրամանատար, գեներալ Թագման մամուլին տված մի հարցազրույցում պնդում էր, որ «PKK ամեն յոթերորդ անդամը հայ է: PKK այդ անդամները զավակներն են այն հայերի, ովքեր Օսմանյան կայսրությունը կռակից դաշունահարեցին Առաջին աշխարհամարտի ընթացքում»:

Նույն գեներալ Թագման 1995թ. մի այլ առիթով եւս հայտնում էր, որ տեղի ունեցած ինչ-որ ծանր մարտերի ընթացքում «քրդեր չկային այնտեղ: Նրանք, ովքեր մեր ստորաբաժանման ուժերի գրոհների արդյունքում նահանջեցին դեպի լեռները, հայեր էին»:

Ներկայիս Եվրոպայում հաստատված մի քանի «թաքուն» հայերի հետ առանձին հարցազրույցներից պարզվում է, թե ինչպես նրանցից ոմանք աշխատել եւ պայքարել են PKK շարքերում եւ Օջալանի գերեվարությունից հետո, հիասթափվելով, որոշել են վերադառնալ մայր հայրենիք կամ մեկնել Զոլանդիա, Գերմանիա եւ այլուր:

PKK էլեկտրոնային տեղեկատվության մեկում կարդում ենք հայաբնակ Սայլակկայա (Ջբին) պատմական գյուղում 1970թ. ծնված հայ երիտասարդ Զուսեյն Սարիչիյեթի մասին, որը զոհվել է Թուրքիայի բանակի դեմ մարտերում 1988թ.:

Թուրքիայի ժայռահեղ ձախ հոսանքներից մեկի՝ TIKKO կազմակերպության համացանցային էջում կարելի է հանդիպել 1946թ. Ամասիայում ծնված Կարպիս Ալթինօղլուի անվանը, կենսագրականին եւ նրա քաղաքական-տեսական հողվածներին, ընդ որում՝ հաճախ է հիշատակվում նրա հայ լինելու պարագան:

Առավելաբար Ջազա-ալեւիական շրջանակներում աշխատող եւ Դերսիմի լեռներում մաքառող նույն այդ TIKKO կազմակերպության զոհվածների ցանկում հանդիպում ենք երեք հայ երիտասարդների կենսագրականներին.

Արմենակ Բաքրջյան՝ ծնված Տիգրանակերտում՝ 1953թ., զոհված Խարբերդում՝ 1980թ.: Նուբար Յալին՝ ծնված Մարդինում՝ 1957թ., զոհված Ամստերդամում՝ 1982թ.: Մանուել Դեմիր՝ ծնված Կեսարիայի Բունիան քաղաքում՝ 1963թ., զոհված Ստամբուլում՝ 1988թ.: Զետաքրքիր է իմանալ, որ Մանուել Դեմիրի հերոսական տիպարին ու սխրանքներին նվիրված թուրքերենով երգ է հորինվել, որը հնչում է քրդական շրջանակներում:

* * *

Այսպիսով՝ բազմաթիվ լրագրություններ, հաղորդագրություններ եւ ուղեգրություններ բավարար հիմք են տալիս եզրակացնելու, որ

ներկայումս տարբեր տիպերով հայության հետքեր կան անատոլիական առնվազն 80-90 քաղաքներում, գյուղերում եւ գյուղակներում:

Տիպաբանական բնորոշմամբ հանդերձ՝ դյուրին չէ մեր խնդրո առարկա հայ բնակչության թվաքանակի մասին վերջնական տեսակետ հայտնել: Այդուհանդերձ, մեջբերում ենք մի քանի վկայություններ:

Իսլամական «Jihadwatch» էլեկտրոնային թերթն իր 2005թ. փետրվարի 17-ի համարում գրում է . «Մինչեւ մեկ միլիոն հայեր են դեռ ապրում Թուրքիայում»:

«Գյոթե» համալսարանի գիտաշխատող Ալիե-Ալիս Ալթըի համոզմամբ՝ «Մինչ երեք միլիոն թուրքացած հայեր կան, որոնք փորձում են իմանալ իրենց ծագման մասին, տասնամյակների լռությունից հետո...»:

Կարիքավոր եկեղեցիների օժանդակության հիմնարկի Թուրքիայի մասին 1998թ. զեկուցագրում կարդում ենք. «20 հազար բապտիստ քրիստոնյաներին իրականում պիտի գումարել եւս չորս ու կես միլիոն քրիստոնյաների, որոնք այնտեղ ապրում են կեղծ եւ թաքուն ինքնու-թյամբ»:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ «Անատոլիայի» «պաշտո-նական» հայությունը մեր հետազոտության աշխարհագրական շրջագծում կազմում է ամնշան թվաքանակ, թերեւս հինգ հազարից պակաս, «իսլամացած» հայության թվաքանակը՝ անցնելով միլիոնի սահմանը, կազմում է շուրջ 1.300.000 մարդ, իսկ «թաքուն» հայությունը՝ ավելի քան 700 հազար մարդ:

Ամեն դեպքում՝ իրողությունն այն է, որ ստվար թվով հայ էթնիկական տարր կա Թուրքիայի արեւելյան երկրատարածքներում, Արեւմտյան եւ Հարավարեւմտյան Հայաստանում, պատմական Կիլիկիայում, ինչպէս նաեւ Փոքր Հայքում ու հարակից շրջաններում. էթնիկական վերա-կերպված տարր, որ մաքառում է ինքնաճանաչման եւ իր ինքնության պահպանման համար: «Մեզ մի՛ մոռացեք,– դիմում է բուն սասունցի, այժմ Մուշում բնակվող Արմեն Մարտիրոսյանը,– Վարդոյի եւ այլ շրջաններում վերապրող շատ հայեր կան: Հայեր, որոնք մինչեւ վերջերս վախենում էին իրենց ինքնությունը հայտնել, բայց այսօր խիզախաբար արտահայտվում ու մաքառում են հայ մնալու համար»:

Թուրքիայի էթնոկրոնական խմբերի համատեքստում՝ հայ մնա-ցորդացի կամ վերակերպված հայության հարցը դեռ կարոտ է խորքային վերլուծությունների: Այդ հսկայական ներուժը կարող է կա՛մ ընթանալ սոսկ տարերային զարտուղիներով, շահագործվել այլեւայլ համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի կողմից եւ, ի վերջո, մարել, կա՛մ վերածվել ազգային շարժման ու վերագարթոնքի:

ՉԻՆԱՍՏԱՆ. ԳԵՐՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՒԼ Գագիկ Տեր-Չարությունյան

Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գործունեության կտրուկ ակտիվացումը (վերջերս ՇՀԿ-ն նոր որոշում ընդունեց, համաձայն որի՝ արտակարգ իրավիճակների դեպքում անդամ երկրների պետական սահմանները բացվում են միմյանց համար), զարգացումները Կենտրոնական Ասիայում (որտեղ ԱՄՆ-ին հարկադրում են լքել Ուզբեկստանում գտնվող Խանաբադի օդառազմակայանը), ռուս-չինական կայացած եւ ռուս-չինա-հնդկական սպասվելիք զինավարժությունները (որոնք ակնհայտորեն ԱՄՆ-ի դեմ են ուղղված) եւ այլ փաստեր վկայում են, որ Չինաստանը, կուտակելով քաղաքական, տնտեսական եւ ռազմական խոշոր ներուժ, որոշել է, ի տարբերություն Նախկինի, գործուն մասնակցություն ցուցաբերել գլոբալ քաղաքական գործընթացներում եւ գրավել համաշխարհային առաջատար տերությանը վայել դիրք, ստանձնել համաշխարհային մասշտաբի պարտավորություններ եւ իրավունքեր:

Գաղափարախոսությունը՝ որպես հզորացման նախապայման

Համաձայն պատմական փորձի եւ դրա վրա հենված քաղաքագիտության տեսական դրույթների՝ նոր ձեւավորված եւ հավակնություններ ունեցող տերության ի հայտ գալը, որպես կանոն, փոխում է գոյություն ունեցող միջազգային հարաբերությունների ձեւը եւ բովանդակությունը: Ինչպես նշում են ամերիկյան վերլուծաբանները, Չինաստանը հզորանում է ոչ թե նրա համար, որպեսզի ինտեգրվի քաղաքական եւ տնտեսական գլոբալ համակարգում, այլ՝ որպեսզի փոխի այդ համակարգը: Անշուշտ, նման իրողությունն առաջին հերթին էապես ազդելու է ԱՄՆ կարգավիճակի վրա, եւ Չինաստանի հզորացումն ամերիկյան ընտրանու կողմից իրավացիորեն դիտարկվում է որպես անմիջական սպառնալիք: Որպես հետեւանք՝ ամերիկյան քաղաքագիտական եւ վերլուծական գրականությունում առաջարկվում են Չինաստանի հզորությունը սահմանափակելու ամենազանազան ծրագրեր: Ինչպես եւ Իրանի պարագայում, ԱՄՆ հեղինակավոր ՋԼՄ-ում տեղ են գտնում տեղեկատվական արտահոսքեր ՉԺՀ-ի նկատմամբ ենթադրվելիք ռազմական սցենարների վերաբերյալ: Ամերիկյան քաղաքական շրջանակներում այսօր սկսել է գերիշխել այն կարծիքը,

թե ԱՄՆ–ՉԺՀ հարաբերությունները բնութագրվում են որպես սառը պատերազմ: Ավելին, ոմանք կարծում են, թե հեռու չէ այն օրը, երբ այդ սառը պատերազմը կարող է վերածվել «թեժի»:

Հարկ է նաեւ հատուկ ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ չնայած ԱՄՆ վերահսկողության տակ գտնվող ՁԼՄ ջանքերին, մինչ այժմ դրանց չի հաջողվում Չինաստանից կերտել միջազգային հանրությանը վտանգ ներկայացնող երկրի կերպար (ինչպես դա կարողացել են անել, մասնավորապես, իսլամական աշխարհի մի շարք պետությունների հետ): Այդ են վկայում, օրինակ, միջազգային սոցիոլոգիական ծառայության հարցումները: Մեծ Բրիտանիայում հարցվողների 65%-ը դրական է մոտենում ՉԺՀ-ին, մինչդեռ ԱՄՆ-ի նկատմամբ (որը անգլիացիների ամենասերտ դաշնակիցն է) դրական վերաբերմունք ունի ընդամենը 55%-ը: Ֆրանսիայում, Իսպանիայում եւ Յուգոսլավիայում Չինաստանի հանդեպ դրական մոտեցում է արտահայտել հարցվողների մոտ 55-60, իսկ ԱՄՆ-ի նկատմամբ՝ ընդամենը 40-45%-ը: Մահմեդական աշխարհում այդ տարբերությունն ավելի զգալի է: Այս փաստը վկայում է այն մասին, որ տեղեկատվական մրցակցության ոլորտում, որտեղ եւ ծեւավորվում է այս կամ այն երեւոյթի նկատմամբ միջազգային հանրության կարծիքը եւ որտեղ ավանդաբար իշխում էր ԱՄՆ-ը, այժմ նախաձեռնությունը պատկանում է Չինաստանին:

Այս առիթով պետք է նշել, որ ԱՄՆ-ի եւ Չինաստանի՝ այսօրվա ամենամրցունակ տերություններ լինելու իրողությունը մեծ չափով պայմանավորված է նրանով, որ այդ երկու երկրներն էլ գործում են համակարգված եւ հենվում են սեփական գաղափարախոսական դրույթների վրա: Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ արդի ամերիկյան եւ չինական գլոբալ ռազմավարության փիլիսոփայությունները բավական մոտ են միմյանց: Դրանք զգալի չափով հենված են ավանդական չինական ռազմավարության դրույթների վրա, որը դեռեւս մ.թ.ա. 6-րդ դարում մշակել է չին նշանավոր մտածող Սուն-Ցզին: Հայտնի է, որ այդ ռազմավարությունը մեր դարաշրջանում առաջինը սկսեցին կիրառել ԱՄՆ հատուկ ծառայությունները՝ Ալեն Դալեսի նախաձեռնությամբ: Հետագայում «չինական» մոտեցումները ներդրվեցին նաեւ տեղեկատվական պատերազմների տեխնոլոգիաներում: Հատկանշական է, որ վերջերս հրապարակված՝ «ԱՄՆ անվտանգության ռազմավարություն» անվանումը կրող հայեցակարգում ընդունվում է, որ ժամանակակից քաղաքական գործընթացները պարունակում են անորոշության մեծ չափ: Դա դժվարացնում է անգամ միջին եւ կարճաժամկետ կանխատեսումներն ու այդպիսով ռազմավարությունն իրագործողներից պահանջում է մտավոր եւ գործնական ճկունություն: Ամերիկյան ստրատեգների այս թեզերը

միանշանակ համընկնում են Սուն-Ցզիի ռազմավարական դրույթների հետ:

Իրենք՝ չինացիները, ի վիճակի եղան կիրառել սեփական ռազմավարության դրույթները ՉԺՀ կայացմանը զուգահեռ: Այսօր Չինաստանի տեղեկատվական եւ հոգեբանական պատերազմների հայեցակարգերն ուղղակիորեն հենված են ավանդական պատկերացումների վրա, եւ այդ ոլորտում չինացիները զգալի հաջողությունների են հասել (որպես դրա արտահայտություն պետք է ընկալել, օրինակ, չինական մարտածեւերի եւ մարտաֆիլմերի լայն տարածումը, որոնցում լավագույնս ներկայացվում է չինացու դրական կերպարը եւ քարոզվում չինական արժեհամակարգը): Ժամանակակից Չինաստանում ավանդական ռազմավարությունը լայնորեն կիրառվում է ոչ միայն քաղաքականությունում կամ ռազմական գործում, այլեւ կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Ընդհանրացնելով նշենք, որ չինական ժամանակակից գաղափարախոսությունն արտահայտվում է ոչ թե դոգմատիկ բանաձեւերով (ինչպես ընդունված էր կոմունիստների, վաղ լիբերալների կամ նացիստների մոտ), այլ հանդիսանում է մի յուրովի մեթոդաբանություն, որը չունի որոշակիություն եւ տարբեր իրավիճակներում թելադրում է ամենատարբեր մոտեցումներ: Այս առումով չինական եւ ամերիկյան գաղափարախոսությունները նման են միմյանց:

Միեւնույն ժամանակ, ամերիկյան եւ չինական մոտեցումների միջեւ գոյություն ունի սկզբունքային տարբերություն. չինական քաղաքական փիլիսոփայությունը գործընթացները եւ զարգացումները դիտարկում է գործնականում անսահմանափակ ժամանակային տիրույթում: Չինական ասույթն այն մասին, որ «եթե երկար նստես գետափին, ապա ջրերը կբերեն թշնամուղ դին», թերեւս լավագույնս է ներկայացնում ժամանակի վերաբերյալ չինացիների պատկերացումները: Մինչդեռ արեւմտյան քաղաքական մոտեցումներում ժամանակային տիրույթները խիստ որոշակի են եւ սահմանափակ: Ավելին, ԱՄՆ-ում իշխող «գերկանխարգելիչ» դոկտրինան ենթադրում է անգամ «առաջ ընկնել» ժամանակից եւ այդպիսով արդեն այսօր ձեւավորել ապագան: Թե որ մոտեցումն է ավելի մրցունակ, ցույց կտա տեսանելի ապագան:

Չինաստանի տնտեսական եւ ռազմական ցուցանիշները

Չինաստանի հզորության էական ցուցանիշներից է նրա տնտեսական առաջխաղացումը: Համաշխարհային բանկի (ՀԲ) տվյալներով՝ ՉԺՀ ՀՆԱ-ն, եթե հաշվարկները կատարվում են յուանի ռեալ գնողունակությունը հաշվի առնելով, արդեն մոտենում է \$ 7 տրիլիոնի (ԱՄՆ ցուցանիշը

\$10,5 տրիլիոն է): Համեմատության կարգով նշենք, որ Ռուսաստանի՝ նման եղանակով հաշվված ՀՆԱ-ն կազմում է մոտ \$1,3 տրիլիոն: Սակայն, հաշվի առնելով Չինաստանի 1,3 միլիարդանոց բնակչությունը, այդ տերությունն այնքան էլ հարուստ չէ: Ներկայումս մեկ շնչին հասնող եկամուտը կազմում է մոտ \$4 500, մինչդեռ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը հասնում է \$34 000, իսկ Ռուսաստանում՝ \$8 300: Սակայն 20 տարի հետո, համաձայն ՀԲ հաշվարկների, Չինաստանի տարեկան 10% աճ ցուցաբերող տնտեսությունը (ԱՄՆ միջին աճը կազմում է 3%, իսկ Ռուսաստանինը՝ 5%) մեկ շնչին բաժին ընկնող եկամուտով կգիջի ԱՄՆ-ին ընդամենը երկու անգամ, իսկ նրա բացարձակ ՀՆԱ-ն կգերազանցի ամերիկյան ցուցանիշը: Նշենք, որ ուղիղ ներդրումների ծավալով՝ \$53 մլրդ, Չինաստանն արդեն այսօր առաջին տեղում է՝ առաջ անցնելով ԱՄՆ-ից եւ Գերմանիայից: Մեծ են նաեւ այդ երկրի ոսկետարադրամային ռեզերվները՝ մոտ \$610 մլրդ:

Բնորոշ է, որ Հարավարեւելյան Ասիայի տնտեսությունը հիմնականում վերահսկվում է չինական խոշոր ընկերությունների կողմից, իսկ այդ երկրների տնտեսական ընտրամիճ վաղուց արդեն չինարեն է սովորում: Օրինակ, Հարավային Կորեայում գրեթե բոլոր կրթված մարդիկ կարդում են չինական հիերոգլիֆները: Այս առումով բացառություն է կազմում միայն Վիետնամը, որի հարաբերությունները Չինաստանի հետ, 70-ականների պատերազմից հետո, դեռեւս չեն վերականգնվել: Բնորոշ է, որ Ռուսաստանի հետ Չինաստանի ապրանքաշրջանառությունը 2004թ. կազմել է ընդամենը \$15 մլրդ, մինչդեռ ԱՄՆ-ի, ճապոնիայի եւ Հարավային Կորեայի հետ նրա ապրանքաշրջանառությունը գերազանցում է \$100 մլրդ-ն:

Առանձնապես կարելու է այն հանգամանքը, որ Չինաստանում արագ զարգանում են առաջավոր տեխնոլոգիաները եւ գիտատար արտադրությունները: Այդ երկրի ծախսերը տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառում արդեն իսկ կազմում են ՀՆԱ 5%-ը եւ այդ չափանիշը մոտենում է ճապոնական (7%) եւ հարավկորեական (8%) չափանիշներին:

Այսօր Չինաստանի տնտեսական առաջընթացի ամենահիմնական խնդիրը ենթադրելի գործոններն են: Արտադրելով օրական 3,6 մլն բարել սեփական նավթ՝ Չինաստանը սպառում է ավելի քան 6,5 մլն բարել (համեմատության համար՝ ԱՄՆ նույն ցուցանիշները կազմում են 8,7 եւ 20,5 մլն բարել): Այս համատեքստում խիստ կարելու է են հարաբերությունները Ռուսաստանի հետ, որն, ի դեպ, չի շտապում կառուցել դեպի Չինաստան տանող նավթուղին: Առավել հաջող են զարգանում հարաբերությունները Ղազախստանի հետ, որը վերջերս չինացիներին վաճառեց իր ենթադրելի ընկերություններից մեկը: Առ այսօր ամենաշոշափելի

նավթագազային հարաբերությունները հաստատվել են Իրանի հետ: 2004-ին կնքվեց մի պայմանագիր, համաձայն որի՝ ՉԺՀ-ն պարտավորվել է 30 տարվա ընթացքում գնել Իրանից 250 մլն տ հեղուկ գազ: Իրանի տարածքում գտնվող Յադրվանի նավթային հորերի շահագործումը չինացիների կողմից թույլ կտա նրանց օրական 150 հազար բարել նավթ ներկրել Իրանից: Այդ գործարքների ընդհանուր գումարը կազմում է մոտ \$70 մլրդ, եւ այսօր Չինաստանը ապրանքաշրջանառության ցուցանիշով դարձել է Իրանի կարեւորագույն տնտեսական գործընկերը: Իրենց հերթին, չինացիները Իրանին մատակարարում են հրթիռային եւ միջուկային ռազմական տեխնոլոգիաներ:

Համաձայն ամերիկյան վերլուծաբանների գնահատականների՝ Չինաստանը տիրապետում է 200-ից մինչեւ 600 միջուկային մարտագլխիկներ ունեցող բալիստիկ հրթիռների: Այդ տերությունն ամեն տարի ավելացնում է ռազմական ոլորտի ծախսերը 12-15%, եւ նրա ռազմական բյուջեն արդեն իսկ կազմում է \$70 մլրդ: Բնորոշ է, որ եթե նախկինում չինացիները գնում էին ռուսական զենքի փոքր-ինչ հնացած տեսակները, ապա այսօր նրանք պահանջում են ամենաարդիական համակարգեր: Հատկապես մեծ է Չինաստանի հետաքրքրությունը ռուսական օդային ստրատեգիական ռմբակոծիչների եւ սուզանավերի նկատմամբ: Ներկայումս չինացիները վարում են ակտիվ քաղաքականություն, որպեսզի վերացվեն Ռուսաստանի եւ ԵՄ արգելքները՝ ՉԺՀ-ին արդիական զենք վաճառելու վերաբերյալ:

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ Սեւակ Սարուխանյան

Օգոստոսի 6-ին տեղի ունեցավ Իրանի նոր նախագահ Մ.Ա. Նեժադի երդման արարողությունը: Նախագահի աթոռը զբաղեցնելուց հետո Նեժադի կողմից ձեւավորվեց նոր կառավարություն, որը, հավանաբար, կգործի մինչեւ նախագահի պաշտոնավարության վերջը:

Օգոստոսը շատ կարեւոր ամիս հանդիսացավ Իրանի ներքին եւ արտաքին կյանքում, քանզի Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի ունեցան մի շարք կարեւոր փոփոխություններ:

Ինչպես եւ սպասվում էր, Մ.Ա. Նեժադի կողմից ձեւավորված նոր կառավարությունում նախարարների պաշտոններ ստացան պահպանողական քաղաքական գործիչները: Ծայրահեղ պահպանողականները ստանձնեցին կարեւորագույն պաշտոններ, այդ թվում՝ նրանց ղեկավարման տակ անցան ներքին գործերի եւ ինֆորմացիայի նախարարությունները: Պահպանողական նոր կառավարությունում չեն ներկայացված ոչ միայն բարեփոխիչներ, այլեւ չափավոր պահպանողական գծի կողմնակիցներ, որոնք համապատասխան պաշտոններ կզբաղեցնեին Հաշեմի Ռաֆսանջանիի հաղթանակի դեպքում:

Անկասկած է, որ ծայրահեղականների մեծամասնությունն իրանական նոր կառավարությունում առաջին հերթին նպատակ ունի ազդանշան ուղարկել արտաքին աշխարհին, որ Իրանի քաղաքական դաշտը ծայրահեղացման իրական հեռանկարներ ունի: Վերը նշված հանգամանքը, ըստ իրանական ստրատեգների, ավելի զիջումների պատրաստ կդարձնի Արեւմուտքին, որն ամեն կերպ կաշխատի Իրանին պահել միջուկային բանակցությունների ձեւաչափում եւ, ի վերջո, կբերի միջուկային հիմնախնդրի լուծման՝ Իրանին մեծ զիջումներ տրամադրելու միջոցով:

Իրանի ներքին կյանքում, իհարկե, կարեւոր նշանակություն կունենա նավթային ոլորտի վերափոխումը: Հարկ է նշել, որ նավթային սեկտորն ապահովում է իրանական տարադրամային հոսքի մեծ մասը, եւ այդ հոսքը վերջին երկու տարիներին նշանակալիորեն ավելացել է՝ շնորհիվ նավթի գների կտրուկ աճի: Իրանական տնտեսության ամենակոռուկ պացված ճյուղը հենց նավթայինն է: Բացի դրանից, նավթային սեկտորի շնորհիվ են հիմնականում առաջ եկել իրանական «նոր շահերը», որոնց

հարստությունը վերջին տարիներին նշանակալիորեն ավելացել է: Կարելու է նավթի նախարարության դերը երկրի քաղաքական դաշտում, քանզի այս հաստատությունը, սկսած Հաշեմի Ռաֆսանջանի երկրորդ նախագահական շրջանից, ղեկավարվել է հիմնականում բարեփոխիչների կողմից, ինչը նշանակալիորեն ավելացրել է խաթամի եւ նրան սատարող շրջանակների ֆինանսական անկախությունը: Նավթի նախարարության նկատմամբ հսկողության հաստատումը նպատակ ունի նաեւ բարեփոխիչներին վերջնականապես զրկել Իրանի կյանքում եական լծակից: Օգոստոսին Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.խամենեյի՝ երկրի հարստություններից ստացված շահույթների ավելի արդար վերաբաշխման մասին արած հայտարարությունը նախանշում է, որ նավթային կարելուրագույն սեկտորի հիմնավոր բարեփոխումները սարերի հետեւում չեն:

Օգոստոսի սկզբին սկսվեց նաեւ Իրանի միջուկային ծրագրի շուրջ որոշակի լարվածության մոր շրջան: Սպահանի միջուկային կենտրոնում ուրանի կոնվերսիայի աշխատանքների վերսկսումը հանգեցրեց Իրան-«Եվրոպական եռյակ» բանակցությունների ժամանակավոր տապալմանը: Կարելի է եզրակացնել, որ մոր նախագահի ընտրություններից հետո Իրանն անցել է մոր միջուկային մարտավարության մշակման, որը պայմանականորեն կարելի է *նոր* անվանել: Այս մարտավարությունը նպատակ ունի համոզել միջազգային հանրությանը, որ Իրանի մոր իշխանություններն ավելի վճռական են տրամադրված միջուկային տեխնոլոգիաների զարգացման հեռանկարների վերաբերյալ:

Այս մարտավարության մասերից մեկն է նաեւ այն, որ Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնից ազատվեց Հ.Ռուհանին եւ մոր քարտուղար նշանակվեց Իրանի նախագահի պաշտոնին վերջին ընտրությունների ժամանակ հավակնող պահպանողական Ա.Լարիջանին: Ռուհանիի հեռացումը եւ Լարիջանի նշանակումը հիմնականում ինֆորմացիոն բնույթ ունեն, քանզի վերջինս միջազգային հանրությանը հայտնի է որպես ամենակոշտ, ծայրահեղական գծի կողմնակից: Իրանին հենց նման բանակցող է հարկավոր ԵՄ ներկայացուցիչների հետ միջուկային էներգիայի զարգացման հեռանկարների շուրջ քննարկումների համար, քանզի Լարիջանին «համոզելու» համար եվրոպացիներն Իրանի համար ավելի շատ բարենպաստ «կոմպենսացիոն» առաջարկություններ կանեն: Հարկ է նշել, որ միջուկային էներգիայի ոլորտը դեռ խաթամի օրոք ուղղորդվել է պահպանողականների կողմից, մասնավորապես, այս ոլորտում գլխավոր ստրատեգ է հանդիսացել երկրի հոգեւոր առաջնորդ Ա.խամենեյին, այլ ոչ թե Մ.խաթամին, որին, ըստ սահմանադրության, ենթակա է Իրանի միջու-

կային էներգիայի կազմակերպությունը: Հատկանշական է, որ նոր կառավարությունում իր պաշտոնը պահպանեց Միջուկային էներգիայի կազմակերպության ղեկավար Գ.Ռ. Աղազադեն, որն ի պաշտոնե նաեւ Իրանի փոխնախագահն է:

Առաջիկա ամիսների ընթացքում հարկ է սպասել միջուկային հարցերում Իրանի դիրքորոշման էլ ավելի կարծրացման, որի հիմնական նպատակներից է այդ կարծրացումից վախեցած եւ Իրանի խնդրի խաղաղ հանգուցալուծման կողմնակից եվրոպացիներից նոր փուլում էլ ավելի շատ զիջումներ ստանալը: Հավանաբար, նոր բանակցային ակտիվ փուլը Իրանի եւ ԵՄ միջեւ կսկսվի ոչ շուտ, քան ուշ աշնանը:

Միեւնույն ժամանակ, ըստ վերջին առաջարկների, որոնք Իրանին արվել են ԵՄ կողմից, ուրանի հարստացումից հրաժարվելու դեպքում Իրանը կստանա ԵՄ աջակցությունը տեխնոլոգիական եւ տնտեսական ուղորտներում, այդ թվում՝ Իրանը կդառնա ԵՄ հիմնական «նավթ եւ գազ մատակարարողը»: ԵՄ համար այս հարցը հատուկ կարեւորություն ունի եւ միաժամանակ ենթադրում է համապատասխան գազամուղների կառուցում, այդ թվում նաեւ Հարավային Կովկասի տարածքով:

Օգոստոսին Իրանում Ադրբեջանի դեսպանը հայտարարեց, որ իր երկրի համար Մ.Ա. Նեժադի ընտրությունը դրական մեծ հետեւանքներ կարող է ունենալ, քանզի Ռաֆսանջանին վառ ընդգծված հակաադրբեջանական գործիչ է: Այս հայտարարությունը կարելի է զուտ քաղաքական համարել, եւ որոշակի տեղաշարժ իրանա-ադրբեջանական հարաբերություններում սպասել չի կարելի: Իրանի որոշումը Հայաստանին եւ Վրաստանին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին որոշակիորեն վկայությունն է այն բանի, որ Իրանը շարունակելու է Հարավային Կովկասում իր նախկին մարտավարությունը եւ այն մշակվելու է, ինչպես նախկինում, ոչ այնքան արտաքին գործերի նախարարությունում, որքան երկրի հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեյի գրասենյակում, մասնավորապես, Խամենեյի միջազգային հարցերով խորհրդական, պահպանողական Ա.Ա. Վելայաթիի կողմից: Վերջինս, հանդիսանալով պահպանողական գործիչ եւ ունենալով ադրբեջանական ծագում, արտաքին գործերի նախարար եղած տարիներին երբեւէ չի առանձնացել ադրբեջանամետ դիրքորոշմամբ:

Միեւնույն ժամանակ, Վրաստանին ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին որոշումը հուշում է, որ Մ.Ա. Նեժադի կառավարությունը շարունակելու է վերջին տարվա ընթացքում դիտված իրանա-վրացական հարաբերությունների դրական զարգացման գիծը, քանզի հենց Վրաստանի կառավարության մոտեցումից է կախված Իրան-Ռուկրահնա-Եվրոպա գազամուղի կառուցման հեռանկարը:

Վերջին մեկ ամիսը ցույց տվեց, որ Իրանը մտադիր է էլ ավելի աշխուժացնել իր քաղաքականությունն Իրաքում, որտեղ դաշնության ստեղծումը հրապարակայնորեն ողջունվում է Իրանի ղեկավարության կողմից, քանզի Իրանին սահմանակից իրաքյան տարածքները հիմնականում անցնելու են, պայմանականորեն ասած՝ *պրոիրանական* շիաարաբական մարմինների իշխանության տակ: Հարկ է նշել, որ քրդական մասի ձեւավորման հեռանկարները իրանական ղեկավարությանն այնքան էլ չեն հուզում: Ավելին, վերջին շրջանում Իրանը կարծես թե Իրաքում քրդական ինքնավարության ստեղծումը դիտարկում է որպես առաջին հերթին հակաթուրքական հետեւանքներ ունեցող երեւույթ: Սա կարելի է բացատրել նաեւ նրանով, որ Իրաքի քրդերի եւ շիա մահմեդականների միջեւ ստեղծված հակասուննիական դաշինքը ստանում է Իրանի աջակցությունը եւ պայմանավորում է իրաքյան քրդերի՝ Իրանի նկատմամբ դիրքորոշման մեղմացում:

Ինչ վերաբերում է Իրան-ԱՄՆ հարաբերություններին, ապա հարկ է նշել, որ Ջ.Բուշի այն հայտարարությունը, թե չի բացառվում Իրանի դեմ զինուժի օգտագործումը, իրանական նոր իշխանություններն ընդունեցին որպես հերթական բլեֆ, քանզի Իրանը կարծես թե վստահ է, որ ԱՄՆ-ը՝ իրաքյան բարդությունների համատեքստում, դեռ երկար ժամանակ պատրաստ չի լինի ռազմական գործողություն իրականացնել Իրանի Իսլամական Հանրապետության դեմ: Սակայն, չնայած սրան, Իրանը, գիտակցելով Կենտրոնական Ասիայում տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխությունների մեծ նշանակությունը, նոր մոտեցում է ցուցաբերում Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գործունեությանը՝ հատուկ կարեւորելով Չինաստանի եւ Ռուսաստանի հետ համագործակցությունը, ինչպես նաեւ ողջունելով Ուզբեկստանի՝ ամերիկյան ռազմակայանների դուրսբերման պահանջը:

Իրանը ՇՀԿ վերջին միստում դարձավ այս կազմակերպության դիտորդ, դիտորդի կարգավիճակով նաեւ ներկա եղավ ռուս-չինական համատեղ զինավարժությանը Հեռավոր Արեւելքում: Ասիական ուղղությանը քաղաքականությանն ակտիվացումը շատ կարեւոր է Իրանի համար, քանի որ ԱՄՆ քաղաքականությանն ընդդիմացող եվրոպական պետություններում (Գերմանիա եւ Ֆրանսիա) նշանակալիորեն ակտիվանում են ԱՄՆ-ին սատարող քաղաքական ուժերի դերն ու դիրքը:

Ինչեւէ, եկող ամիսների ընթացքում Իրանը եւ նրա քաղաքականությունը մնալու են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, ինչը հիմնականում պայմանավորված կլինի միջուկային խնդրի լուծման հեռանկարներով: Հարկ է նշել, որ հարցի ցանկացած լուծում որակապես նոր իրավիճակ կստեղծի Իրան-արտաքին աշխարհի հարաբերություն-

ներում: Հայաստանի համար, իհարկե, շատ կարելի է հարցի խաղաղ կարգավորումը, ինչը ենթադրում է Իրան–ԵՄ հարաբերությունների ջերմացում: Այս ջերմացումը ՀՀ համար մեծ նշանակություն կունենա հիմնականում երեք պատճառով.

❖ ավելի իրատեսական կդառնան Իրան–ԵՄ գազամուղի կառուցման հեռանկարները,

❖ Իրանի հետ հարաբերությունների լավացման դեպքում ԵՄ-ը կամրապնդի դիրքերը Հարավային Կովկասում եւ կապահովի տարածաշրջանի քաղաքական եւ տնտեսական բազմաբեւեռությունը,

❖ Իրան–ԵՄ հարաբերությունների ջերմացումը կհանգեցնի Իրանի տնտեսության ինտեգրմանը համաշխարհային տնտեսության մեջ, կբերի Իրանի անդամակցությանը Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը եւ, զրկելով Իրանի կառավարությանը հովանավորչության քաղաքականություն վարելու հնարավորությունից, կբացի հսկայական իրանական շուկան հայկական ապրանքատեսակների եւ արդյունաբերության համար:

ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ **Արտակ Շաքարյան**

Թուրք-սիրիական հարաբերություններում արդարացիորեն նոր փուլի սկիզբ է համարվում 1998թ., երբ երկու երկրների միջև հարաբերություններն այն աստիճան լարվեցին, որ ստեղծվեց ռազմական բախման հավանականություն:

Պատճառը Քրդական բանվորական կուսակցության գրոհայինների ահաբեկչական գործունեության ակտիվացումն էր: Անկարան ուներ տվյալներ, որ ՔԲԿ անդամների մեծ մասը ոչ միայն թաքնվում ու մարզվում էր Սիրիայի տարածքում, այլև օգտագործում էր սիրիական բանկերը Թուրքիայում իրենց գործունեության ֆինանսավորման համար: Ավելին, այնտեղ էր թաքնվում ՔԲԿ առաջնորդ Աբդուլահ Օջալանը: Մինչև 1987թ. Սիրիան մերժում էր Օջալանի ներկայության եւ կամ ՔԲԿ-ին աջակցության փաստը: Սակայն 1987թ. հուլիսին Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալի այցի ընթացքում երկու երկրները ստորագրեցին պայմանագիր, համաձայն որի՝ պարտավորվում էին չօժանդակել գործընկեր երկրի դեմ գործող կազմակերպություններին: Սիրիան, սակայն, չպահեց այս խոստումը, ինչպես նաեւ հաջորդները, որոնք արվեցին 1988թ. օգոստոսին, 1992թ. ապրիլին, 1993թ. նոյեմբերին, 1994թ. ապրիլին:

Այդպես էր Դամասկոսը փորձում հակազդել Անկարային, որը կառուցելով մի շարք ամբարտակներ Տիգրիս ու Եփրատ գետերի վրա՝ վերահսկում էր ջրի հոսքը Սիրիա: Թուրքիան կարող էր թե՛ նվազագույնի հասցնել այն, ինչպես բազում անգամ սպառնացել է, թե՛ հեղեղել Սիրիան: Համաձայն Օզալի վերոհիշյալ այցի ընթացքում ստորագրված պայմանագրի՝ Թուրքիան պարտավորվում էր տրամադրել Սիրիային վայրկյանում 500 խորանարդ մետր ջրի հոսք, թեև վերջինս պնդում էր, թե ոռոգման կարիքները հոգալու համար այդ թիվը պետք է հասցնել մինչև 700-ի: Ինչպես, Անկարան ջրի հոսքն օգտագործում էր որպես ճնշման լծակ, եւ 1991թ. քրդերի պատճառով միջպետական հարաբերություններում ծագած ճգնաժամի հետեւանքով հոսքի ծավալն իջեցրեց մինչև 165 խորանարդ մետրի:

1998թ. Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստում որոշում ընդունվեց ավելացնել զինվորական միավորումների համամասնությունը Սիրիայի հետ սահմանի վրա, ինչպես նաեւ ճշտել սահմանա-

մերձ տարածքների ակամադաշտերի քարտեզները՝ անհրաժեշտության դեպքում դրանք անցնելու համար:

Սակայն նույն՝ 1998թ. հոկտեմբեր ամսին, մի քանի փորձից հետո, կողմերին հաջողվեց հասնել դիվանագիտական համաձայնության: ՔԲԿ առաջնորդ Աբդուլահ Օջալանն արտաքսվեց Սիրիայից: Անկարան ու Դամասկոսը ստորագրեցին Ադանայի համաձայնագիրը, ըստ որի՝ սիրիական տարածքում փակվեցին ՔԲԿ մի քանի ռազմական ու մարզական ճամբար, արգելափակվեցին նրա ակտիվ անդամների բանկային հաշիվները: Սա դրական արձագանք ունեցավ թուրքական հասարակական, քաղաքական ու գործարար շրջանակներում: Որոշում ընդունվեց ակամազերծել սահմանամերձ տարածքները, ինչը զարկ տվեց սահմանային առևտրի զարգացմանը: Դյուրացվեց սահմանամերձ բնակչության վիզային ռեժիմը: Տասնյակ հազարավոր ազգականներ բաժանված են եղել սահմանով 1939թ. ի վեր, երբ Ֆրանսիան՝ Ազգերի լիգայի մանդատի հիման վրա, Ալեքսանդրեթի սանջաքը Սիրիայի կազմից փոխանցեց Թուրքիային, որտեղ այն ստացավ Հաթայի վիլայեթ անունը: Ջրի հոսքը Սիրիա հասցվեց վայրկյանում մինչև 900 խորանարդ մետրի:

Թուրքիայի կողմից այս ժեստը բերեց նրան, որ այլևս դադարեցվեց շեշտադրվել տարածքային հարցը Դամասկոսի կողմից, որը բոլոր սիրիական պաշտոնական քարտեզների մեջ ներառում էր նաև Հաթայի վիլայեթը: Սիրիայի այս քայլը ոգեւորությամբ ընդունվեց Իսրայելի վարչակարգի կողմից, քանի որ դա կարող է նախադեպ ծառայել Գոլանի բարձունքների խնդրում:

* * *

Միջպետական կապերն աննախադեպ կերպով զարգացան Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի մահվանից հետո: Հանգուցյալի որդի Բաշար Ասադն օգտագործեց Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերի այցը թաղման արարողությանը՝ հարաբերությունները կարգավորել փորձելու համար:

2000-2005թթ. Թուրքիայի ու Սիրիայի միջև տեղի են ունեցել ավելի քան 55 պաշտոնական այց: 2004թ. ապրանքաշրջանառությունը հասավ մինչև 1 մլրդ ԱՄՆ դոլար ծավալի:

Անկարայի ու Դամասկոսի հարաբերությունների ջերմացման քաղաքական հիմնական պատճառներից հանդիսացավ ամերիկյան զորքերի մուտքն Իրաք, ինչպես նաև Հյուսիսային Իրաքում քրդերի դերակատարության կարելու մը Վաշինգտոնի կողմից: Թե՛ Թուրքիային, թե՛ Սիրիային անհանգստացնում է քրդական անկախ պետության

հավանականությունը: Երկու երկրներն էլ ունեն բավականաչափ ստվար քրդական տարր (մոտ 10 մլն թուրքիայում եւ 4 մլն Սիրիայում), որի հետ խնդիրները կտրուկ կաճեն, եթե Յուսիսային Իրաքում քրդերը ստանան անկախություն:

Տվյալ ժամանակաշրջանում թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացումը եւս նպաստեց Անկարա-Դամասկոս առանցքի ամրապնդմանը, քանի որ վերջինս թուրքիա-իսրայել համագործակցությունը դիտում էր որպես հակասիրիական:

2004թ. հունվարին Սիրիայի նախագահ Բաշար Ասադն այցելեց Թուրքիա՝ դառնալով Սիրիայի անկախությունից հետո Անկարայում պաշտոնական այցով գտնվող առաջին նախագահը: Թուրք-սիրիական հարաբերություններն արագացման նոր ազդակ ստացան: Երկու երկրների նախագահները դատապարտեցին ԱՄՆ ինտերվենցիան Իրաք, ինչպես նաեւ արտահայտվեցին հոգուտ Իրաքի տարածքային ամբողջականության պահպանման, այսինքն՝ ընդդեմ քրդական անկախ պետության:

Թուրք-ամերիկյան եւ թուրք-իսրայելական հարաբերությունների սառնությունը, ինչպես նաեւ թուրք-իրանական հարաբերությունների վերելքը տարածաշրջանային նոր առանցքի հնարավորություն ուրվագծեցին՝ Թուրքիա-Իրան-Սիրիա: Երեք երկրներին էլ հույժ անհանգստացնում են քրդական հիմնահարցը, Իրաքի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաեւ Իսրայելի ու ԱՄՆ-ի աջակցությունը Յուսիսային Իրաքի քրդերին:

Սիրիայի վարչապետ Մուհամեդ Նաջի Օթրին 2004թ. հուլիսին պաշտոնական այց կատարեց Անկարա, իսկ նույն տարվա դեկտեմբեր ամսին Թուրքիայի վարչապետը 17 տարի ընդմիջումից հետո պատասխան այց կատարեց Դամասկոս: Ռեջեփ Թայիփ Էրդողանն այս այցի ընթացքում իր գործընկեր Մուհամեդ Նաջի Օթրիի հետ ստորագրեց պայմանագիր՝ Սիրիայի հետ սահմանամերձ Յաթայի վիլայեթում համատեղ հեկի շինարարության վերաբերյալ, ինչպես նաեւ Սիրիան դարձավ առաջին արաբական երկիրը, որը Թուրքիայի հետ ստորագրել է ազատ առևտրի գոտու վերաբերյալ համաձայնագիր:

Այցի դրական արդյունքները երկու կողմերին թույլ տվեցին անել համատեղ հայտարարություն, թե «Սիրիայի համար Թուրքիան բաց դարպաս է դեպի Եվրոպա, իսկ Թուրքիայի համար Սիրիան բաց դարպաս է դեպի արաբական աշխարհ»:

2005թ. հունվարին տված հարցազրույցում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլահ Գյուլը նշեց, որ Անկարան պատրաստ է զարգացնել հարաբերությունները Թեհրանի ու Դամասկոսի հետ. «Այդ

հարաբերությունների զարգացումը հետաքրքրում է թուրքիային տնտեսական, քաղաքական ու ռազմավարական տեսակետից, քանի որ դրանք նպաստում են տարածաշրջանում անվտանգության ու կայունության ապահովմանը»: Նա նաեւ ավելացրեց, որ այս երկրների հետ տնտեսական կապերի շահերն այնքան մեծ են, որ այլոց արձագանքները չեն կարող ստիպել թուրքիային վերանայել դրանք:

Սրան անմիջապես հաջորդեց ԱՄՆ բարձրաստիճան ռազմա-դիվանագիտական գործիչների այցն Անկարա: ԱՄՆ-ը փորձեց վերանայել իր սառեցված հարաբերությունները թուրքիայի հետ՝ ձգտելով հետ պահել Անկարային Իրանի ու Սիրիայի հետ հարաբերությունների առավել ջերմացումից:

Ինչեւէ, 2005թ. ապրիլի 13-ին տեղի ունեցավ թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերի պաշտոնական այցը Սիրիա: Վաշինգտոնը քանիցս պահանջներ ներկայացրեց, որպեսզի Սեզերը չեղյալ հայտարարի իր պատասխան այցը Դամասկոս՝ ձգտելով պահպանել Սիրիայի մեկուսացումը: Թուրքական կողմը, սակայն, ցույց տալով իր անկախությունն արտաքին քաղաքականությունում, տեղի չտվեց Բուշի վարչակարգի ճնշումներին: Միաժամանակ, թուրքիայի փոխարտգործնախարար Ալի Թույգանի գլխավորած պատվիրակությունը մեկնեց ԱՄՆ՝ իրավիճակը մեղմելու համար:

* * *

Թուրք-ամերիկյան հարաբերություններում Դամասկոսի հարցն ուրույն տեղ ունի: Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ ս.թ. հունիսին Վաշինգտոն կատարած այցի ընթացքում քննարկված թեմաներից մեկն էլ Սիրիայի խնդիրն էր:

Բուշի հետ հանդիպումից հետո մամլո ասուլիս հրավիրած Էրդողանի առանձնացրած կետերից առավել աչքի ընկավ Մեծ Մերձավոր Արեւելք նախագծում թուրքիայի ստանձնած «առաջին հանձնարարականների» նախանշումը, որոնցից է բազմակուսակցական համակարգի հիմնումը տարածաշրջանի երկրներում (*հիմնականում ակնարկվում էր Սիրիան-Ա.Շ.*): Սրանով, թերեւս, Էրդողանը ցանկություն ուներ մեղմել Վաշինգտոնի՝ Անկարային ուղղված սուր քննադատությունը Դամասկոսի հետ սերտ համագործակցության համար:

Սիրիային ուղղված կոչերը շարունակվեցին «Նյու Յորք Թայմս» թերթին տված հարցազրույցում, որտեղ թուրքիայի վարչապետը, ակներեւորեն արդեն իր նոր դերի մեջ մտնելով, կոչ արեց Սիրիային՝ վարչակարգի հարցում օրինակ վերցնել թուրքիայից:

* * *

Թուրքիայի եվրոպական մշուշոտ ապագան հուշում է նրան՝ չանտեսել Մերձավոր Արեւելքում առաջնորդի դերին հավակնելու այլընտրանքը: Որպես այդ քաղաքականության արդյունք՝ ականատես ենք դառնում Թուրքիայի եւ իր հարեւանների միջեւ հարաբերությունների ջերմացմանն ու Մեծ Մերձավոր Արեւելք ամերիկյան նախագծում Անկարայի պատրաստական ներգրավմանը:

Առաջիկայում Թուրքիան կձգտի պահպանել Սիրիայի հետ հարաբերություններում առկա ջերմ մթնոլորտը՝ ձգտելով հասնել համագործակցության նաեւ Մեծ Մերձավոր Արեւելք նախագծի շրջանակներում:

Որպես այդ նախագծի առաջնորդ երկիր՝ Թուրքիան կշարունակի առաջարկել իր միջնորդությունը սիրիա-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացում, ինչպես նաեւ միջնորդ կհանդիսանա Վաշինգտոն-Դամասկոս երկխոսությունում:

Միաժամանակ, սակայն, ջրային եւ հողային խնդիրների հանգուցալուծման բացակայությունը, ինչպես նաեւ արտաքին հնարավոր ազդակները կարող են լրջորեն արգելակել թուրք-սիրիական հարաբերությունների հետագա զարգացումը:

**ԵՎՐՈՊԱՅԻ ՄԱՅՄԵԴԱԿԱՆՆԵՐ.
ՄԵԿՈՒՄԱՑՈՒՄ, ԹԵ՞ ԻՆՏԵԳՐՈՒՄ
Սուրեն Մանուկյան**

2005թ. հունիսի 6-ին Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք Լոնդոնում հնչած պայթյունների անմիջական հետեւանքներից էր նաեւ Եվրոպայի մահմեդական համայնքների նկատմամբ հետաքրքրության աճը:

Եվրոպացիները կարծես մեկ օրում հայտնաբերեցին իրենց կողքին ապրող մահմեդականների փաստը եւ սկսեցին խոսել Արեւմտյան Եվրոպայի շուրջ 12 միլիոն իսլամադավան քաղաքացիներից սպասվող հնարավոր «սպառնալիքի» մասին:

Սակայն եթե անգամ նման սպառնալիք կա, ապա այն առաջին հերթին ոչ թե ահաբեկչական վտանգն է, որի աղբյուրը ռազմատենչ արմատականներն են, այլ ավելի շուտ ավանդական եվրոպական ինքնությանը նետված մարտահրավերը:

«Մահմեդական եվրոպացու» ձեւավորումը

Ժամանակակից եվրոպական, հատկապես մահմեդական ինտելեկտուալ շրջանակներում ակտիվորեն քննարկվում է «մահմեդական եվրոպացու» ձեւավորման խնդիրը:

Տեղի է ունենում մի նոր ինքնագիտակցության ձեւավորում. Եվրոպայում ապրող իսլամադավան քաղաքացիներն այլեւս չեն ցանկանում առանձնանալ իրենց ազգային պատկանելությամբ, այլ միմյանց միավորող եւ քրիստոնյա եվրոպացիներից տարբերակող հատկանիշ են ընտրել կրոնական պատկանելությունը, որը մշակութաբանական եւ արժեքային տեսակետից շատ ավելի որոշիչ եւ ուժեղ տարր է եվրոպական-քրիստոնեական քաղաքակրթության հետ մրցակցության պարագայում: Թեեւ այս ամենը դեռ սաղմնային վիճակում է, սակայն արդեն կարելի է խոսել մի նոր, բավական հետաքրքիր միտման մասին՝ «Յին մայրցամաքում» բնակվող մահմեդականներն այլեւս չեն պատրաստվում ապրել ժամանակավոր անցորդի կամ հյուրի կարգավիճակում, այլ փորձում են ինքնորոշվել իբրեւ Եվրոպայի բնակչության անբաժանելի մաս:

Բնականաբար, նոր ինքնության կառուցումն իր հետ կրերի նաեւ նոր արժեքներ, ինչն արդեն լուրջ հավակնություն է՝ հաշվի առնելով

Եվրոպայում իսլամի ավելի «մոդայիկ» դառնալը, ինչի վկայությունը կարող են լինել երիտասարդ եվրոպացիների շրջանում նկատվող կրոնափոխության ժամանակակից միտումները:

Եվ այս պայմաններում, «արդյոք Եվրոպան կդիմանա՞ իսլամական մշակութային էքսպանսիային» հարցին բնավ չի կարելի միանշանակ պատասխան ունենալ:

Ընթացող գործընթացների մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել Եվրոպայում իսլամական համայնքների ձեւավորման ակունքները եւ զարգացման միտումները:

Եվրոպայում իսլամական համայնքների ձեւավորման պատմությունից

Եվրոպայի իսլամական համայնքները ձեւավորվեցին հիմնականում 20-րդ դ. սկզբին: Եվրոպական արդյունաբերությունն էժան աշխատուժի կարիք ուներ եւ սեփական մարդկային ռեսուրսները չէին կարող բավարարել նման պահանջը: Խնդիրը լուծվեց Արեւելքի երկրներից ներգաղթողների անընդհատ հոսքի ապահովմամբ: Ներգաղթող աշխատուժը հիմնականում եվրոպական երկրների մահմեդական գաղութներից էր:

Չետաքրքրական է, որ այս շրջանում եվրոպական պետություններն իրենք էին փորձում ընդգծել հարգանքը ներգաղթողների իսլամական ինքնության նկատմամբ՝ դրանով իսկ փորձելով ապահովել նոր աշխատողների համակրանքը: Այսպես, 1926թ. ֆրանսիական կառավարության նախաձեռնությամբ եւ աջակցությամբ հիմնադրվեց Փարիզի Մեծ մզկիթը, ավելի վաղ երկիր էին հրավիրվել բազմաթիվ հոգեւորականներ, որոնք պետք է լրացնեին ներգաղթած մահմեդականների շրջանում հնարավոր հոգեւոր եւ գաղափարական սովը:

Ներգաղթողների հոսքն ավելի ուժեղացավ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ Մարշալի պլանի շրջանակներում վերականգնվող հետպատերազմյան Եվրոպան նորից աշխատուժի կարիք զգաց: Եվրոպան դժները լայնորեն բացեց մահմեդական նորանկախ երկրներից ներգաղթող երիտասարդների առջեւ, որոնց պակաս՝ «երրորդ աշխարհում» տեղի ունեցած ժողովրդագրական պայթյունի հետեւանքով, չէր զգացվում:

Եվրոպական երկրները հատկապես խրախուսում էին նախկին գաղութների բնակիչների ժամանումը՝ համարելով, որ նրանք առավել շուտ կհարմարվեն նոր հասարակություններում տիրող կյանքի պայ-

մաններին: Ֆրանսիա էին ժամանում Մադրիբի եւ Արեւմտյան Աֆրիկայի երկրներից, Անգլիա՝ Յնդկական ենթամայրցամաքից:

Մինչեւ 70-ական թթ. այս «աշխատանքային ներգաղթողները» գրեթե բացառապես տղամարդիկ էին: Նրանք հիմնականում նախկին գյուղացիներ էին, որոնք ամուր կառչած էին իրենց ծննդավայրի ավանդույթներից եւ ապրում էին ներփակ, փոքրիկ խմբերով: «Նոր» երկրներում հաստատվելու գործընթացը դեռ չէր սկսվել, ներգաղթողները գիտակցում էին այստեղ գտնվելու ժամանակավոր բնույթը եւ չէին պատրաստվում քիչ թե շատ մշտական հաստատություններ եւ կառույցներ հիմնել:

Այս պարագայում բնավ էլ զարմանալի չէ, որ ներգաղթողները հիմնականում ինքնորոշվում էին ազգային պատկանելությամբ, եւ նրանց կրոնական ինքնությունը թույլ էր արտահայտված: Գերմանիայում եւ Ֆրանսիայում գործող փոքրաքանակ մզկիթները եւ աղոթատները դատարկ էին, իսկ Միավորված Թագավորությունում մահմեդական կազմակերպությունների եւ մզկիթների ցանցը կազմավորվեց միայն 50-ական թթ. վերջին:

1973թ. արաբա-իսրայելական պատերազմից հետո իրավիճակը փոխվեց, նավթի գների աճն ուժեղ հարված հասցրեց եվրոպական տնտեսությանը, ինչը հանգեցրեց գործազրկության կտրուկ աճի, որի հիմնական զոհերը դարձան մահմեդական երկրներից ներգաղթած, բարձր որակավորում չունեցող բանվորները: Եվրոպական կառավարությունները, փորձելով մեղմել գործազրկությունից առաջացած սոցիալական լարվածությունը, ընդունեցին ներգաղթի մակարդակը սահմանափակող օրենքներ:

Իրականում սա տվեց հակառակ արդյունք: Նույնիսկ անգործ մնացած ներգաղթածները որոշեցին հաստատվել եվրոպական երկրներում, քանի որ պարզ գիտակցում էին, որ հայրենիք մեկնելու դեպքում երկրորդ անգամ նրանց այլեւս չի հաջողվի վերադառնալ Եվրոպա: «Չին մայրցամաքում» հաստատվելու որոշումն առաջ բերեց ընտանիքների միավորման եւ նոր ընտանիքների ձեւավորման խնդիր: Մի քանի տարվա ընթացքում Եվրոպայում հաստատված մահմեդականների բացառապես արական համայնքները տարալուծվեցին կանանցով:

Կանանց հայտնվելը հեղափոխական հետեւանքներ ունեցավ համայնքի կառուցվածքի եւ մտածելակերպի մեջ: Կնոջ ներկայությունը նշանակում էր ապրելու քիչ թե շատ հաստատուն պայմանների ստեղծում, երեխաների դաստիարակության եւ կրթության հարցերի առաջացում, համայնքային փոխօգնության ձեւավորում: Եվ այս ամենն իր հետ բերեց կրոնի դերի շեշտակի աճ:

Այս պայմաններում արդեն առաջանում էին համայնքներ, որոնց անդամներին կապող հիմնական գործոնը կրոնական գիտակցությունն էր: Պատկանելությունն իսլամական համայնքին դառնում է աջակցության եւ օգնության ստացման հիմնական միջոցը: Մզկիթը դառնում է այն խորհրդանիշը, որի շուրջ միավորվում են նորահաստատ մահմեդական «եվրոպացիները»: Այս նույն ժամանակաշրջանում սկսվում է նավթային տերությունների եւ համաիսլամական կազմակերպությունների ֆինանսական զգալի աջակցության տրամադրումն այս համայնքներին: Մեծ թափ է ստանում մզկիթների կառուցումը, որոնք դառնում են եվրոպական քաղաքային ճարտարապետության անբաժանելի մասը:

հնքության ծգնաժամ եւ ելքերի որոնում

Այս պայմաններում մահմեդական համայնքների ներսում առաջանում են ընտանիքներ, որոնց զավակներն արդեն 90-ականներին եվրոպական երկրների մահմեդական քաղաքացիների առաջին սերունդն են, որ ստացել են եվրոպական կրթություն, խոսում են տվյալ երկրի լեզվով եւ քաջածանոթ են տեղական մշակույթին: Այս երիտասարդները կտրուկ տարբերվում են ծնողներից, որոնք ապրում էին փակ համայնքներով եւ մեծ դժվարությունների էին հանդիպում սոցիալական ադապտացիայի բնագավառում: «Նոր եվրոպացիները» այլեւս չունեն ավագ սերնդի բարդույթները եւ պատրաստ են դառնալ «նոր հայրենիքի» լիարժեք քաղաքացիներ:

Սակայն ժամանակի ընթացքում նրանք գիտակցում են, որ, այնուամենայնիվ, տեղի հասարակության կողմից չեն ընկալվում իբրեւ սովորական եվրոպացիներ: Հանդուրժողականության վրա հիմնված եվրոպական հասարակությունները չեն ցանկանում ընդունել նրանց իբրեւ հավասարի, եւ վերաբերմունքը նրանց նկատմամբ իբրեւ եկվորների շարունակում է տիրապետող մնալ:

Հոգեբանական այս խզումը լուծման երկու տարբերակ է առաջարկում: Շատերն ընտրեցին արմատականացման տարբերակը:

90-ականների երիտասարդների սերունդը բախվեց սոցիալական բազմաթիվ դժվարությունների: Գործազրկությունն իր հետ բերեց քաղաքային չքավոր մի զանգվածի առաջացում, որն ավելի ընկալունակ էր արմատական իսլամական հոսանքների քարոզչությանը, որը մուտք գործեց իր համար բոլորովին նոր ոլորտ՝ եվրոպայի իսլամական համայնքներ եւ շատ կարճ ժամանակահատվածում լցրեց այստեղ առաջացած գաղափարական վակուումը:

Երբ հին, ավանդական արժեքներն արդեն իսկ հնացած եւ ոչ արդյունավետ են թվում, իսկ ընդունող հասարակությունը՝ թշնամական, ձեւավորվում են նոր մտածելակերպ եւ գործելակերպ, ինչը թույլ է տալիս մահմեդական երիտասարդությանն ինքնահաստատվել նոր պայմաններում: Դա իրականացվում է իսլամական շարժումների միջոցով, որոնք ամենօրյա կյանքի հստակ կանոնակարգված օրենքներ սահմանելով՝ վերջ դրեցին անտանելի անորոշությանը: Այս մոտեցումը, փաստորեն, նախատեսում էր ընդունող երկրի նկատմամբ ավելի թշնամական վերաբերմունք, երբ օտարված մահմեդական երիտասարդությունը պատրաստ էր նույնիսկ պայքարել նրա դեմ:

Եվ, կարելի է ընդունել, որ այս գործելակերպի կողմնակիցները բավական շատ են: Հետաքրքիր է իսրայելական «Սաերեթ Մաթկալ» հատուկ էլիտար ջոկատի հրամանատարներից մեկի՝ Մոթի Մարցիանոյի՝ լոնդոնյան պայթյուններից հետո արտահայտած կարծիքը. *«Նման տիպի գործողությունները նախապատրաստվում են մի քանի ամիսների ընթացքում, իրականացվում են մի քանի տասնյակ ակտիվ գրոհայինների ջանքերով եւ մի քանի հարյուր օգնականների աջակցությամբ: Դրանց հաջող իրականացման համար պահանջվում են ուղեղային կենտրոն, օպերատիվ շտաբ, ուժային ապահովման, տեղեկատվական, կապի, տրանսպորտային ապահովման խմբեր, պայթուցիկ նյութերի պահպանման հերթափոխային պահակախումբ, օպերատիվ շտաբի տեղափոխումն ապահովող ջոկատ, գաղտնագրողների համակարգ, սեփական անվտանգության խմբեր: Բացի այդ, Լոնդոնում օգտագործված մեծ քանակությամբ պայթուցիկն անհրաժեշտ էր տարբեր ճանապարհներով հասցնել տեղ եւ պահպանել մինչեւ գործողության սկիզբը»:* Այս ամենը հիմք է տալիս կարծելու, որ խոսքը ոչ թե սովորական ահաբեկչական գործողության, այլ լուրջ կազմակերպչական կառույց ունեցող մի համակարգի մասին է, որի հաջող գործունեության համար անհրաժեշտ է մեծ հասարակական աջակցություն:

Գոյություն ունի նաեւ մեկ այլ ճանապարհ: Իր ուժերին վստահ նոր սերունդը մերժում է արմատականությունն ու ահաբեկչությունը եւ պատրաստ է սեփական իրավունքները պաշտպանել ու հասնել իր նպատակներին այն երկրներում, որոնց քաղաքացին հանդիսանում է: Նոր սերնդի երիտասարդները ցանկանում են լինել եվրոպական պետությունների լիիրավ քաղաքացիներ՝ միաժամանակ պահպանելով եւ ընդգծելով սեփական մահմեդական ինքնությունը: Սա անմիջական հակասության մեջ է մտնում որոշ եվրոպական պետությունների քաղաքականության հետ եւ հաճախ նույնիսկ վերաճում է շահերի բավական լուրջ բախման:

Չեռանկարներ

Այսօր Եվրոպայի էթնիկ պատկերը հսկայական փոփոխություններ է կրում: Սպիտակամորթ եվրոպացին, կարելի է ասել, այլևս պատմություն է: Եվրոպական մեծ քաղաքներում նշանակալի է «արեւելյան» եւ «հարավային» տիպ ունեցող մարդկանց ներկայությունը:

Համաձայն տարբեր միգրացիոն ծառայությունների եւ փորձագետների հաշվարկների՝ Արեւմտյան Եվրոպայի մահմեդական բնակչության թիվը տատանվում է 8-15 միլիոնի շրջանակներում: Ֆրանսիայում նրանց թիվը հասնում է 3,5-5 մլն-ի, Գերմանիայում՝ 3-4,5 մլն-ի, Մեծ Բրիտանիայում՝ 1,5-2 մլն-ի, Ղուանդիայում նրանց թիվը տատանվում է 0,5-1 միլիոնի սահմաններում, իսկ Բելգիայում հասնում է 300 հազարի: Այս թվերը շարունակական աճ են արձանագրում ի հաշիվ ծնելիության բարձր մակարդակի եւ անօրինական ներգաղթի, որը հնարավոր չի լինում կանգնեցնել՝ ի հեճուկս դրա դեմ ընդունվող օրենքների:

Եվրոպական շատ մայրաքաղաքներում եւ խոշոր քաղաքներում գոյություն ունեն փոքրիկ Դամասկոս, Ալժիր կամ էլ Իզմիր հիշեցնող թաղամասեր՝ ազգային երաժշտության, խոհանոցի, իսլամական ավանդույթների եւ սովորույթների մենաշնորհային իրավունքով: Փակ համայնքները սեփական ինքնության պահպանման համար իդեալական տեղ են:

Այս պարագայում տեղի է ունենում, այսպես կոչված, եվրոպական իսլամի ձեւավորում, որի հիմնական դրույթը հանգում է հետեւյալին. մահմեդականները չպետք է սահմանափակվեն իրենց փակ համայնքներում, նրանք պետք է ստանան եվրոպական կրթություն եւ ակտիվորեն մասնակցեն Եվրոպայի հասարակական-քաղաքական կյանքին՝ դրանով նպաստելով իսլամի տարածմանը: Չեռաքրքիր է, որ նույն մարտավարությունն է նկատվում «Մահմեդական եղբայրներ» կազմակերպության մոտ. այն կոչ է անում իսլամական համայնքներին քաղաքականապես, սոցիալապես եւ տնտեսապես ինտեգրվել եվրոպական հասարակության մեջ՝ պահպանելով մահմեդական էությունը: Այս կանոնները կատարելով՝ իսլամական համայնքները կարող են գոյատևել եւ միաժամանակ տարածել իրենց ազդեցությունը ոչ իսլամական շրջանների վրա:

Արմատական գաղափարախոսության կրողները, չնայած իրենց գործողությունների հնչեղությանը, այնուամենայնիվ, կազմում են Եվրոպայի իսլամադավան բնակչության փոքր մասը միայն:

Այսպիսով, Եվրոպայի մահմեդական բնակչությունը դառնում է քաղաքական կյանքի էական գործոն, եւ ապագայում նրա դերակատարությունը

ավելանալու է: Արդեն ստեղծվել են եվրոպական մահմեդական կազմակերպություններ (Եվրոպայի իսլամական կազմակերպությունների միությունը Գերմանիայում, Իսլամական կազմակերպությունների դաշնությունը Ֆրանսիայում, Եվրոպայի իսլամական խորհուրդը Մեծ Բրիտանիայում), որոնք, օգտագործելով երիտասարդ մահմեդականների ներուժը, մեծ քաղաքական եւ հասարակական կշիռ են ձեռք բերել եւ իրենց գործունեության հիմնական նպատակն են դարձնում միջնորդությունը կառավարության եւ իսլամական համայնքի միջեւ:

Եվրոպան, իր հերթին, չի պատրաստվում հրաժարվել արեւմտյան քաղաքակրթության հիմքը հանդիսացող մշակութային եւ բարոյական արժեքներից: Փորձ է արվում մահմեդական համայնքներն ուղղորդել եվրոպական քաղաքական մշակույթի եւ հանդուրժողականության հունով, ինչը թույլ կտա հնարավորինս խուսափել Եվրոպայի մահմեդականների սոցիալ-քաղաքական մեկուսացումից եւ նրանց շրջանում արմատական հայացքների ամրապնդումից:

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄՏՆՈՒՄ Է
«ԴԱԴԱՐԻ» ՓՈՒԼ
Յուրեր Վեդրին**

Ֆրանսիայի արտաքին գործերի նախկին նախարար **Յուրեր Վեդրինը** լայնորեն ճանաչված է որպես «գերտերություն» եզրի հեղինակ, որով նա բնորոշում էր Միացյալ Նահանգների կարգավիճակը սառը պատերազմից հետո:

Վեդրինի ողջ գործունեությունը կապված է պետական ծառայության հետ: 34 տարեկանում դառնալով նախագահ Միտերանի դիվանագիտական խորհրդական՝ նա այնուհետև հաջորդաբար զբաղեցրեց նրա մամլո ծառայության պետի եւ աշխատակազմի ղեկավարի պաշտոնները: 1997թ. խորհրդարանական ընտրություններում Սոցիալիստական կուսակցության հաղթանակից հետո Վեդրինը ժուպենի կառավարությունում նշանակվեց արտաքին գործերի նախարար:

Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցության այս ազդեցիկ գործչի հետ «Свободная мысль-XXI» հանդեսի գլխավոր խմբագիր Վլադիսլավ Ինոզենցեւի հարցազրույցից:

Հարց - Պարոն Վեդրին, ԵՄ Սահմանադրության հանրաքվեի բացասական արդյունքը նշանակո՞ւմ է, արդյոք, որ Եվրոպայում ծավալվում է «երկու համակարգերի յուրատեսակ պայքար»:

Պատ. - Դա ակնհայտ չէ, քանզի ֆրանսիացիների «ոչ»-ը չափից ավելի բազմանշանակ է: Որոշ ընտրողներ քվեարկեցին կառավարության, ոմանք՝ Եվրամիություն թուրքիայի մտնելու, մի մասը՝ եվրոպական բյուրոկրատիայի, իսկ շատերը՝ նաև միասնական Եվրոպայի սոցիալական քաղաքականության դեմ: Այնպես որ, ես չեմ ասի, թե խոսքը ինչ-որ երկու համակարգերի պայքարի մասին է:

Միաժամանակ, հանրաքվեի արդյունքում ի հայտ եկան ամբողջ շարք լուրջ խնդիրներ:

Առաջինը վերաբերում է Միացյալ Եվրոպայի եւ ազգային պետությունների միջև հաշվեկշռին: Ինչպե՞ս պիտի նրանց միջև բաշխվեն լիազորությունները: Իմ կարծիքով, սահմանադրական պայմա-

նագրի նախագիծն այս հարցին լավ պատասխան էր տալիս: Ցավոք, որոշ եվրոպական ժողովուրդներ դրան չհամաձայնեցին: Սակայն դա չափազանց կարելուր քաղաքական հարց է եւ անմիջապես կապված է ինչպես ազգային, այնպես էլ համաեվրոպական բյուրոկրատիայի հետ:

Երկրորդ խնդիրը Միացյալ Եվրոպայի համար սոցիալական քաղաքականության կողմնորոշիչների ընտրության մեջ է, եւ այնտեղ, իր հերթին, ամփոփված են երկու հարց: Մի կողմից՝ արժե՞, արդյոք, սոցիալական քաղաքականությունը փոխանցել վերազգային ինստիտուտների տնօրինությանը, թե՞ պետությունները պետք է պահպանեն նրա նկատմամբ հսկողությունը: Եվ, մյուս կողմից՝ ինչպիսի՞ սոցիալական քաղաքականություն է անհրաժեշտ Եվրոպային՝ հովանավորչակա՞ն, թե՞ ազատական: Արժե՞, արդյոք, ամեն կերպ հոգ տանել աշխատավորների շահերի պաշտպանության մասին՝ հաշվի չառնելով աճող գործազրկությունը, թե՞ նախապատվությունը տալ առավել ճկուն սկզբունքներին, որոնք ապահովում են նվազ պաշտպանվածություն, բայց խթանում են նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այս թեմայով վեճեր ծավալվում են յուրաքանչյուր եվրոպական պետությունում:

Հարց - Նման պայմաններում Եվրոպան կարո՞ղ է, արդյոք, ընդարձակվել:

Պատ. - Իրավաբանական տեսանկյունից ԵՄ Սահմանադրության հավանության ու նրա ընդարձակման միջեւ կապ չկա: Սակայն քաղաքական տեսանկյունից այս երկու խնդիրների միջեւ կապն ակներեւ է: Ֆրանսիայում եւ Յուգոսլավիայում շատերը քվեարկելով Սահմանադրության դեմ՝ քվեարկեցին ընդլայնման դեմ, որը, նրանց կարծիքով, չափից ավելի սրընթաց էր:

Եվրոպական վարչարարներին չհետաքրքրեց հանրության կարծիքը, եւ տվյալ հարցով բանավեճեր այդպես էլ չծագեցին: Ուստի, կար զգացում, թե ընդարձակումը վերելից է պարտադրված: Մեկին դա ձեռնտու է, մեկին՝ ոչ, ինչն ապագայում կդանդաղեցնի ինտեգրման գործընթացները: Եվրոպան, անշուշտ, չի հրաժարվի ընդլայնման գաղափարից, բայց եվրոպական ինստիտուտների զարգացումը, որոնց լեգիտիմությունն առավել չափով տուժեց «բողոքող» քվեարկությունից, կդանդաղի: Անհնար է ժխտել կապը ընդարձակման (որը կարծես «ողողում-տանում» է Եվրոպայի ինքնությունը) եւ վտանգի աճող զգացումի միջեւ: Իրավիճակի կայունացման համար ժամանակ է պետք: *Եվրոպական ինտեգրումը մտնում է «դադարի» փուլ:*

Հարց - Դուք ինչպե՞ս եք պատկերացնում Եվրոպայի ապագան: Ձարգանո՞ւմ է, արդյոք, Միացյալ Եվրոպան դաշնության կամ համադաշնության ուղղությամբ:

Պատ. - Ես գտնում եմ, որ Դաշնային Եվրոպան մեռած է: Այն պատրանք է, ուտոպիա, որն իր կառուցողական դերակատարումն ունեցավ Երկրորդ աշխարհամարտից հետո, սակայն արդեն վաղուց հասկանալի է, որ Եվրոպական ժողովուրդները չեն ցանկանում միավորվել դաշնության մեջ: Եվրոպացիները ցանկանում են ապրել խաղաղության ու լիության մեջ, լինել ազատ, զգալ իրենց պաշտպանված, ունենալ լայն քաղաքացիական իրավունքներ, ընդ որում՝ ցանկալի է առանց կոշտ պարտավորությունների: Միաժամանակ, նրանք ձգտում են պահպանվել որպես ազգ: Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծման կամ մեկ երկրում Ֆրանսիայի եւ Գերմանիայի միավորման գաղափարներն ուտոպիական են: Դրանք ճանաչում էին վայելում ինտելեկտուալների, փիլիսոփաների, անգամ որոշ քաղաքական գործիչների մոտ: *Եվրոպական բոլոր ժողովուրդները խաղաղություն ցանկանում են, բայց չեն ուզում ձուլվել միմյանց մեջ:*

Հարց - Դուք ասում եք, որ Եվրոպան չի կարող անվերջ ընդարձակվել: Բայց որտե՞ղ են Եվրոպայի սահմանները: Նշանակո՞ւմ են, արդյոք, Ձեր բառերը, թե Ռուսաստանը երբեք չի կարող մտնել ԵՄ:

Պատ. - Չնայած իմ ողջ հարուստ փորձին, ես չեմ կարող Ձեզ ասել, թե որտեղով է անցնում Եվրոպայի սահմանը: Սակայն ես համոզված եմ, որ զգալ այն անհրաժեշտ է: Իհարկե, այդ սահմանը չի կարող լինել «պաշտպանական բնագիծ», ինչպես անցյալում էր: Օրինակ, Միացյալ Նահանգներն ունի սերտ, այդ թվում՝ տնտեսական կապեր Կանադայի ու Մեքսիկայի հետ, բայց նա չի առաջարկում նրանց՝ մտնել իր կազմի մեջ. նշեմ, որ դա չեն ցանկանում ո՛չ մեքսիկացիները, ո՛չ կանադացիները: Եվրոպային նույնպես հարկ է լինելու ինչ-որ տեղ կանգ առնել: Եթե Եվրոպական բյուրոկրատները չկարողանան հստակ նշել սահմանները, կբարձրանա բողոքի զանգվածային ալիք: Հենց նման փաստարկը կանխորոշեց Սահմանադրության մերժումը հոլանդացիների կողմից, չնայած նրանք բաց, ձեռներեց ու Եվրոպամետ ազգ են: *Եվրոպայի սահմանները գոյություն ունեն. մնում է հասկանալ, թե որտեղով են դրանք անցնում:*

Եվ դրանում ողբերգական ոչինչ չկա, քանզի Եվրոպան չի պատրաստվում մարտնչել նրանց հետ, ովքեր կհայտնվեն իր սահմաններից

դուրս: Գոյություն ունեն համագործակցության բազմաթիվ այլ ձևեր ոչ եվրոպական պետությունների հետ, որոնք, հնարավոր է, նույնիսկ շահագրգռված էլ չեն ԵՄ մտնելու մեջ: Անհեթեթություն է ենթադրել, թե, օրինակ, Ռուսաստանը կցանկանա մտնել 35 պետություններից կազմված կառույցի մեջ մյուսների հետ հավասար պայմաններով՝ նույնիսկ այն դեպքում, երբ այսօր իր լավագույն օրերը չի ապրում: Իմ կարծիքով, Ռուսաստանին վիճակված է վերադառնալ համաշխարհային ասպարեզ՝ որպես ինքնուրույն եւ հզոր «խաղացող», այլ ոչ թե եվրոպական բարդ համակարգի հասարակ պտուտակ:

Չարք - Ունի^ո, արդյոք, Եվրոպան հստակ ռազմավարություն Ռուսաստանի նկատմամբ:

Պատ. - Ճշտված քաղաքականություն Ռուսաստանի նկատմամբ Եվրոպայում չկա: Յուրաքանչյուր երկիր հավատարիմ է սեփական վարքագծին: Եվրոպացիների մեծ մասը կարծում է, թե Ռուսաստանը պատճառ չունի ցանկանալու մտնել Միացյալ Եվրոպա: Չնչին փոքրամասնությունը գտնում է, որ Ռուսաստանը կարող է դառնալ ԵՄ անդամ: Կան նաեւ այլ տեսակետներ: Օրինակ, Ֆրանսիան Ռուսաստանը համարում է կարելոր դիվանագիտական դաշնակից: Գերմանիան Ռուսաստանը նախելառաջ ընկալում է որպես տնտեսական գործընկեր: Մյուսներն առաջնային են համարում ռուսական պետության ժողովրդավարացումը՝ գտնելով, որ Եվրոպայի դերն այն է, որպեսզի նպաստի ժողովրդավարության կայացմանը Ռուսաստանում: Բայց կան նաեւ այնպիսիները, որոնք Ռուսաստանի մեջ տեսնում են սպառնալիք. թեպետ ԽՍՀՄ փլուզումից անցել է մեկուկես տասնամյակ, խորհրդային ազդեցության գոտում գտնվող բալթյան պետությունները, Լեհաստանը շարունակում են երկյուղել Ռուսաստանից:

ԵՄ ու Եվրոպական հանձնաժողովի 25 անդամ երկրների ներկայացուցիչներ այսօր անընդունակ են սահմանել Ռուսաստանի վերաբերյալ առաջնահերթությունների աստիճանակարգը: Ուստի, կրկնում են, ձեր երկրի նկատմամբ համաձայնեցված քաղաքականություն Եվրոպայում բացակայում է:

Չարք - Ռուսաստանի հանդեպ Եվրոպացիները կողմնակից են չմիջամտելու քաղաքականությանը եւ երեւոյթներն անվանում են այնպես, ինչպես դրանք կան: Սակայն արդարացն^ում է իրեն, արդյոք, նման քաղաքականությունն այն երկրների նկատմամբ, որտեղ իրադրությունն անհամեմատ ավելի ծանր է, քան Ռուսաստանում: Կարո՞ղ եք

Դուք պատկերացնել, թե Եվրոպան կամ ԱՄՆ-ը, չհամբերելով, կմիջամտեն այդպիսի պետությունների գործերին:

Պատ. - Դա բարդ խնդիր է: Մի կողմից՝ ԵՄ-ը եւ ԱՄՆ-ը կցանկանային լինել ողջ աշխարհում ժողովրդավարության ու մարդու իրավունքների դատապաշտպանը: Ընդ որում, եթե Միացյալ Նահանգները նման նպատակների հասնելու համար չի խորշում ռազմական մեթոդներից, ապա ԵՄ-ը գերադասում է ձեռնպահ մնալ ուժի կիրառումից: Բայց եւ ամերիկացիները, եւ մենք մնում ենք իրատեսներ, ուստի ջանում ենք հասկանալ՝ որո՞նք են մեր շահերը:

Ամերիկացիները բարդությւն չեն զգում, երբ ժողովրդավարություն են պարտադրում որեւէ երկրի, սակայն ընդդիմանում են հարեւան պետության ժողովրդավարացմանը, եթե դա վնասում է իրենց ազգային շահերին: Նույնպիսի խնդիր ծառայած է նաեւ Եվրոպացիների առջեւ: Արդեն բազում տասնամյակներ Եվրոպական պետությունները տքնում են Աֆրիկան ուղղել ժողովրդավարացման ճանապարհ: Երբեմն այն տալիս է դրական արդյունքներ, սակայն հաճախ էլ հրահրում է էթնիկական բախումներ: Վերջինս հող է ստեղծում տարակուսանքի համար: Եվրոպան դեգերում է սեփական իդեալիզմի եւ անողորմ իրականության միջեւ: Չի կարելի մոռանալ՝ Եվրոպացիներն անուղղելի իդեալիստներ են. նրանք շատ են ցանկանում, որ աշխարհը կախարդական փայտիկի շարժումով վերածվի մեծ ժողովրդավարության: Բայց նրանք չգիտեն ինչպես դրան հասնել: Այսօր նրանք կոշտ հայտարարություններ են անում, սակայն մյուս օրը լռում են կամ, որն ավելի վատ է, միմյանց միջեւ հարաբերություններ պարզում: Բայց, որպես կանոն, *Եվրոպական պետությունները պատրաստ չեն սատարել ժողովրդավարությանն այնտեղ, որտեղ չունեն անմիջական շահեր:*

Նայեք Մեծ Բրիտանիային: Այն կարող է իրեն թույլ տալ կտրուկ հայտարարություններ Բիրմայի հասցեին, քանզի դա չի սպառնում իր տնտեսական շահերին: Այն խիստ քննադատության է ենթարկում Ջիմբաբվեի վարչակարգը, որովհետեւ Ռոբերտ Մուզաբեն խրախուսում է բրիտանական ֆերմերներին հողից սեփականազրկելը: Սակայն շատ այլ հարցերում Ֆորին օֆիսը լռում է: Նույնը վերաբերում է Ֆրանսիային. մենք պարտավոր ենք հաշվի առնել մեր սերտ հարաբերությունները Չյուսիսային Աֆրիկայի երկրների եւ մյուսների հետ: Այլ խոսքերով՝ *մարդու իրավունքների եւ ժողովրդավարության պաշտպանման միասնական քաղաքականություն գոյություն չունի:* Ես ավստոսում եմ, բայց ստիպված եմ խոստովանել. եթե դուք ժողովրդավար եք մի պետությունում, որը

հավասարակշռում է ժողովրդավարությունը եւ ավտորիտարիզմը, հարկ չկա հույս դնել Եվրոպայի վրա: Եվրոպան կարող է ձեզ աջակցել, սակայն հազիվ թե ցանկանա լուծել ձեր խնդիրները:

ԵՄ-ը հստակ դիրքորոշում ունի միայն այն պետությունների նկատմամբ, որոնք ցանկանում են մտնել իր կազմի մեջ: Այն տարածաշրջաններում, որտեղ Եվրոպան որոշակի ազդեցություն ունի, ինչպես, օրինակ, Բալկաններում, հնարավոր են համագործակցության առավել նուրբ ձեւեր: Բայց ինչ վերաբերում է մյուս խոշոր տարածաշրջանների հետ հարաբերություններին, ապա այստեղ մեզ հարկ է լինելու հաշվեկշիռ փնտրել սկզբունքայնության եւ անմիջական շահերի միջեւ:

Չարդ - Միացյալ Նահանգներն աշխարհում «տարածում» է ազատություն եւ ժողովրդավարություն, որոնք էլ ստեղծել են ժամանակակից Ամերիկան: Սակայն Եվրոպան աշխարհին առաջարկում է կառավարման հատուկ մոդել, որը ստեղծվել ու մշակվել է իր կողմից: Կարո՞ղ է, արդյոք, Եվրոպական մոդելը տարածվել Եվրոպայի սահմաններից դուրս:

Պատ. - Ամեն ինչ այդպես պարզ չէ: Ես կարծում եմ, որ ամերիկացիներն ունեն «գլոբալ» ծրագիր, եւ դա ամերիկյան առաջատարության ծրագիրն է: *Նրանց անհրաժեշտ է իշխել աշխարհի վրա՝ անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի այդ աշխարհը:* Ես Միացյալ Նահանգները կոչեցի «գերտերություն», մյուսներն օգտագործում են «հեգեմոն» կամ «կայսրություն» եզրերը: Իմ նախկին գործընկեր Մադլեն Օլբրայթը խորհում էր «անփոխարինելի ազգի» մասին: Ժողովրդավարացումն իր նշանակությամբ երկրորդական ամերիկյան «նախագիծ» է: Եվ չկա երաշխիք, որ այդ ժողովրդավարացումը բարօրություն կբերի Ամերիկային. չէ՞ որ այսօր պարզ է, որ եթե Սաուդյան Արաբիայում անցնեն ազատ ընտրություններ, այնտեղ կհաստատվի հակաարեւմտյան վարչակարգ:

Եվրոպական քաղաքական համակարգն, իր ներկայիս տեսքով, Եվրոպական մայրցամաքի բացառիկ, երբեմն նաեւ չափազանց արյունալի պատմության արգասիքն է: Եվրոպական հասարակությունն՝ իր սոցիալական պաշտպանվածությամբ եւ անհատի ու հանրության միջեւ հարաբերությունների ներդաշնակությամբ, սկսեց ձեւավորվել արդեն Երկրորդ աշխարհամարտից հետո: Եվրոպացիներն այսօր անչափ բավարարված են նրանով, ինչը ձեռք են բերել եւ դեմ չէին լինի տարածել այդ համակարգը մնացյալ աշխարհում, բայց չգիտեն ինչպես դա անել: Չէ՞ որ յուրաքանչյուր պետություն ունի սեփական պատմությունը, եւ

վերստեղծել այն բացառիկ պայմանները, որ Եվրոպայում ձեւավորվել էին 20-րդ դարի կեսին, անհնար է:

Դատողություններ անելով աշխարհի մյուս տարածաշրջաններում կառավարման եվրոպական համակարգի ներդրման հնարավորության մասին՝ եվրոպացիները տատանվում են իդեալիզմի եւ իրականության միջեւ: Անձամբ ես վստահ չեմ, թե եվրոպական համակարգն ընդհանրապես հնարավոր է «պատճենել»: Չէ՞ որ խոսքն ինքնուրույն զարգացման տեւական ավանդույթներ ունեցող 20-ից ավելի պետությունների միավորման մասին է. միավորում՝ թելադրված իրենց ինքնիշխան իրավունքները միասին վայր դնելու ձգտումով: Եվ, չնայած ես համոզված եմ, որ, օրինակ, Ռուսաստանը Եվրոպայից սովորելու բան ունի, բայց նաեւ գտնում եմ, որ *«օտար հող» եվրոպական փորձի կուրորեն փոխադրումից հարկավոր է խուսափել:*

Свободная мысль-XXI, N7, 2005

FREEDOM HOUSE. «ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՏՈՒՆ

1941թ. Միացյալ Նահանգներում՝ մեկուսացվածության եւ չեզոքության քաղաքականության դեմ պայքարելու, ինչպես նաեւ երկիրը երկրորդ աշխարհամարտում ներգրավելու նպատակով, ստեղծվեցին մի քանի կազմակերպություններ, որոնք Փերլ Յարբորի վրա հարձակումից քիչ առաջ միավորվեցին եւ Սպիտակ տան գաղտնի օժանդակությամբ Նյու Յորքում հիմնեցին ընդհանուր կենտրոնակայան՝ Freedom House (Ազատության տուն) անվանումով:

Ջորջ Ֆիլդի ղեկավարությամբ Freedom House-ը պատերազմի ընթացքում թողարկեց հարյուրավոր ռադիոհաղորդումներ, հրապարակեց պամֆլետներ եւ կազմակերպեց էքսպոզիցիաներ՝ ներգաղթյալներից օգնելու, զինված ուժերում ռասայական ինտեգրումն արագացնելու համար: Սակայն ասոցիացիան չսահմանափակվեց սոսկ հասարակությունում պատերազմի պաշտպանմանն ուղղված կամպանիայով. այն գործատուների եւ արհմիությունների հատուկ բյուրոյի միջոցով նաեւ կազմակերպեց արդյունաբերության մոբիլիզացիան: Սկսած 1943թ., Freedom House-ը սահմանեց ազատության ամենամյա մրցանակ, որի առաջին դափնեկիրը եղավ 20-ականներին քարոզչության պետական մարմինների հիմնադիր Ուոլթեր Լիպմանը:

Պատերազմի վերջում Freedom House-ը չլուծարվեց եւ շարունակեց պաշտպանել Սպիտակ տան նոր ճակատամարտերը: Կազմակերպությունն անցկացրեց Մարշալի պլանին եւ ՆԱՏՕ-ին աջակցող, ֆրանսիական ու բրիտանական կայսրությունների ապագաղութացմանը սատարող եւ, իհարկե, կոմունիզմի դեմ կամպանիաներ: Այն, առավել, քան մյուս կազմակերպությունները, զարգացրեց «Միացյալ Նահանգներն ազատության երկիր է» կարգախոսը: Հենց «Ազատության տան» աշխատասենյակներում 1949թ. դրվեց արեւմտաեվրոպական ինտելեկտուալների մանիպուլացման՝ ԿՀՎ լայնածավալ գործողության հիմքը, որի համար ստեղծվեց, այսպես կոչված, Մշակույթի ազատության կոնգրեսը:

* * *

60-ականների վերջին Ջորջ Ֆիլդը պաշտոնաթող եղավ, եւ Freedom House-ի ղեկավար դարձավ Լեոնարդ Սասմանը, որի առջեւ ծառայակալ Վիետնամում ամերիկյան ինտերվենցիայի պաշտպանման դժվարին խնդիրը:

1982թ., երբ նախագահ Ռոնալդ Ռեյգանը հիմնեց ժողովրդավարության ազգային հիմնադրամը (NED), որպեսզի պատշաճ քողի ներքո ապահովի ԿՀՎ որոշակի գաղտնի գործունեության հաջորդականությունը, Freedom House-ն ինտեգրվեց այդ նոր համակարգում: Նույն ժամանակ Փոլ Վուլֆովիցն ու իր նեոպահպանողական ընկերներն այդ կառույցներում ներդրեցին բազմաթիվ ակտիվ տրոցկիստների՝ ամերիկացի սոցիալ-դեմոկրատներից: NED-ը դրամական օժանդակություն է ցույց տալիս Freedom House-ին, որն իր հերթին մասնակիորեն ֆինանսավորում է NED-ի ընտրած ծրագրերը՝ դրանով քողարկելով ԱՄՆ միջամտության հետքերը:

1983թ. հունվարին, Իրան – Կոնտրաս սկանդալի ժամանակ, Ռեյգանը վերակազմավորեց Միացյալ Նահանգների «հրապարակային դիվանագիտության» ողջ համակարգը, որը Ազգային անվտանգության խորհրդում գլխավորեց Ուոլթեր Ռեյմոնդը: Վերջինս ստեղծեց վերահսկողության կոմիտե, որի կազմի մեջ, որպես Freedom House-ի ներկայացուցիչ, մտցրեց Սասմանին:

1986թ. Freedom House-ն աշխատանքի ընդունեց Մշակույթի ազատության կոնգրեսի հրապարակումների նախկին գլխավոր խմբագիր Մելվին Լեքսիին, որը Լոնդոնում բացեց միջազգային մամուլում պատվերով հոդվածների տարածման գործակալություն: Ինչպես ժամանակին նրա կողմից ղեկավարվող Encounter հանդեսը, այս ծրագիրը (Exchange) նույնպես ֆինանսավորում էր ԿՀՎ-ն:

Այս ծրագրում աշխատում են Վլադիմիր Բուկովսկին, Ադամ Միխնիկը, Անդրե Գյուքսմանը, Ժան-Ֆրանսուա Ռեւելը եւ ուրիշներ: Հոդվածները վերատպվում են Միացյալ Թագավորության The Daily Mail, The Daily Telegraph, The Times պարբերականներում, Ջամայկայի The Daily Gleaner-ում, բայց հատկապես Միացյալ Նահանգների The Wall Street Journal հանդեսում:

Նույն թվականին Freedom House-ն սկսեց «աշխարհում դավանանքի ազատության» իր ծրագիրը: Կոնգրեսի կողմից վերսկսված հատկապես այս նախաձեռնությունը 1998թ. հանգեցրեց Արտասահմանում դավանանքի ազատության խորհրդակցական հանձնաժողովի երեւան գալուն, որը կազմում է ամենամյա զեկույց այդ թեմայով:

1988թ. Freedom House-ն ստեղծեց Կենտրոնական Ամերիկայի գծով աշխատանքային խումբ, որի նպատակն էր սանդինիստական հեղափոխության մասին նյութերի տարածումը: Այս առիթով AFL-CIO-ի արհմիութենական գործիչները մտցվեցին Freedom House-ի վարչության կազմի մեջ, որը հաջողությամբ օգտագործում էր արհմիության հիմնած եւ ԿՀՎ նպատակներին ծառայող American Institute for Free Labor Development մասնագիտացված ինստիտուտը:

* * *

90-ականներին Freedom House-ն ընդարձակեց գործունեությունը, որի համար բացեց բյուրոներ Ալժիրում, Յունգարիայում, Յորդանանում, Ղազախստանում, Կիրգիզիայում, Մեքսիկայում, Ուզբեկստանում, Լեհաստանում, Ռումինիայում, Սերբիայում եւ Ուկրաինայում: Ասոցիացիան ցանկացավ իր բյուրոն բացել նաեւ Նիգերիային սահմանակից որեւէ պետությունում, սակայն հետո ժամանակավորապես հրաժարվեց դրանից:

Freedom House-ը, համագործակցելով Ամերիկյան փաստաբանների ասոցիացիայի հետ (որը միջամտության արդեն գոյություն ունեցող մոդելի – զաղտնի գործողություններում արհմիությունների եւ գործատուների մասնակցություն – հիման վրա ստեղծել է մասնագիտացած բյուրո), գործարկեց Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի այլախոհների՝ մարդու իրավունքների հարցերով կրթության ծրագիրը: Այս ասոցիացիան վայելում էր Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI)՝ NED/ԿՀՎ-ի ներսում ժողովրդավարական կուսակցության բաժանմունքի աջակցությունը:

1999թ. Freedom House-ը հիմնեց «Չեչնիայի խաղաղության ամերիկյան կոմիտեն»: Այն ղեկավարում են ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով նախկին խորհրդական Ջեյմս Բեյզիսկին, նախկին պետքարտուղար Ալեքսանդր Չեյզը եւ նախկին կոնգրեսական Սթիվեն Սոլերսը: Այդ նրանք Աֆղանստանում խորհուրդների դեմ ջիհադ նախաձեռնեցին, երբ բոլոր երեքն էլ աշխատում էին իրենց պաշտոններում, այնուհետեւ շարունակեցին օժանդակել Բեն Լադենին, որպեսզի ուղղեն ջիհադը սկզբում Բոսնիա-Յերցեգովինա՝ ընդդեմ Բելգրադի կոմունիստական իշխանությունների, իսկ հետո՝ Չեչնիա, որ նպաստեց Ռուսաստանի Դաշնության փլուզմանը եւ ստանան Կովկասի ածխաջրածինների վրա հսկողություն:

2002թ. Freedom House-ը Յունգարիայում, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, բացեց վեբ-սերվիս՝ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի այն ոչ կառավարական կազմակերպությունների համար, որոնց հետ նա համագործակցում է:

Բոլորովին վերջերս Freedom House-ը ARENA ծայրահեղ աջ կուսակցության (որը մասնակցել է Միջազգային հակակոմունիստական լիգայի աշխատանքներին եւ պատասխանատու է Սալվադորում բազմաթիվ անօրենք դատաստանների համար) ռեաբիլիտացման նպատակով կամպանիա անցկացրեց: Այդ ջանքերը պսակվեցին հաջողությամբ, քանզի Անտոնիո Սաքան դարձավ երկրի նախագահ:

Վերջապես, նախագահ Բուշը Freedom House-ին հանձնարարեց կազմել ամենամյա զեկույց՝ աշխարհում քաղաքացիական ազատությունների եւ քաղաքական իրավունքների վերաբերյալ, որի հիման վրա Միացյալ Նահանգները որոշում է կայացնում Millennium Challenges Corporation-ի (Յազարամյակի մարտահրավերների կորպորացիա) շրջանակներում օգնություն տրամադրելու կամ մերժելու մասին:

Վերջին տարիներին Freedom House-ի ղեկավարն էր դեմոկրատ կոնգրեսական Բիլ Ռիչարդսոնը՝ Նյու Մեքսիկո նահանգից. գաղտնի դիվանագիտության մասնագետ, որին 4 անգամ ներկայացրին (ապարդյուն) խաղաղության Նոբելյան մրցանակի: Նա համատեղում էր իր ֆունկցիաները NDI-ի փոխնախագահի պարտականությունների հետ, Մադլեն Օլբրայթի հետ մեկտեղ: Սակայն Ռիչարդսոնը՝ Նյու Մեքսիկոյի նահանգապետ ընտրվելու կապակցությամբ (նաեւ հուլիս ուներ 2004թ. նախագահական քարոզարշավում դառնալ Ջոն Քերիի գործընկերը), վայր դրեց այդ պարտականությունները: Նրա հաջորդը դարձավ Ջեյմս Վուլսին՝ ԿՀՎ նախկին տնօրենը եւ Իրաքի Ազգային կոնգրեսի ստեղծման գաղափարի հեղինակը:

Կազմակերպության վարչության կազմը կարող է հետախուզության տեղեկագիրք ծառայել: Բացի վերոհիշյալ անձանցից, այնտեղ են նաեւ NDI-ի նախկին նախագահ եւ ԱՄՆ մարդասիրական օգնության նախկին համակարգող Բրայան Էթվուդը, Եռակողմ հանձնաժողովի նախագահ, Յետախուզության գծով նախագահին կից խորհրդակցական խորհրդի նախկին ղեկավար, դեսպան Թոմաս Ֆոլին, Empower America-ի նախագահ Թեոդոր Ֆորսթմանը, քաղաքակրթությունների բախման տեսաբան Սամուել Յանտինգտոնը, ժնեւում ՄԱԿ դեսպան, Պենտագոնի Պաշտպանության խորհրդակցական խորհրդի անդամ Ջին Քըրք-պատրիկը եւ CME կոնսորցիումի (որը գնում կամ հիմնում է հեռուստատեսային ընկերություններ ողջ Արեւելյան Եվրոպայում) հիմնադիր, դեսպան Մարկ Փալմերը:

Կազմակերպության աշխատանքային բյուջեն 2002թ. կազմել է շուրջ 14 մլն դոլար:

**Reseau Voltaire,
Ֆրանսիա**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կարեն Խանլարյան ՀԱՅ ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԲԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	1
Գագիկ Տեր-Հարությունյան ՉԻՆԱՍՏԱՆ. ԳԵՐՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՒԼ	8
Սեւակ Սարուխանյան ՋԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ	13
Արտակ Շաքարյան ԹՈՒՐԹ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	18
Սուրեն Մանուկյան ԵՎՐՈՊԱՅԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐ. ՄԵԿՈՒՍԱՑՈ՞ՒՄ, ԹԵ՞ ԻՆՏԵԳՐՈՒՄ	23
Յուրբեր Վեդրիմ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄՏՆՈՒՄ Է «ԴԱԴԱՐԻ» ՓՈՒԼ	30
FREEDOM HOUSE. «ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՏՈՒՆ	37

*Շապիկի վրա պատկերված է
Շաքիի ջրվեժը (Սիսիան)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: